

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԶԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ



Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական
ռազմավարության ու 2015 թվականի Գործնական պլանի կատարման
հաշվետվություն

Փետրվար, 2016 թվական

Հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով
Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ

Հասցե. Թբիլիսի, 0134, Գ.Լեոնիձե փ. №3/5

Հեռախոս. +995 32 2923299; +995 32 2922632

Կայք-էջ. www.smr.gov.ge

Էլ.փոստ.: tinagog@hotmail.com

Նախարան.....	4
I. Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին	8
Աջակցություն փոքրաթիվ և կարիքավոր էթնիկ փոքրամասնություններին ..8	
Գենդերային մեյնստրիմինգ	11
Պետական վարչարարության և իրավապահ մարմինների ու մեխանիզմների մատչելիության ավելացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար	12

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողներին հավասար ընտրական միջավայրի ապահովում.....	14
Լրատվամիջոցների տեղեկատվության մատչելիություն	18
Մարդու իրավունքների վերաբերյալ հասարակության իրազեկվածության ապահովում.....	22
II. Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների հնարավորությունների ստեղծում	27
Սոցիալական շարժունություն	27
Ենթակառույցի վերականգնում.....	29
III. Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի տիրապետման բարելավում	30
Որակյալ համընդհանուր կրթության մատչելիության ավելացում.....	28
Բարձրագույն կրթության մատչելիության ավելացում.....	31
Մասնագիտական և չափահասների կրթության ապահովում	33
Պետական լեզվի տիրապետման բարելավում.....	41
IV. Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի ապահովում.....	53
V. Հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի իրականացրած գործունեություն	65

Նախարան

Անցած տարիների ընթացքում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ պետական քաղաքականություն իրականացնելու մի կարևոր գործիք էր ներկայացնում «Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և 2009-2014 թվականների գործնական պլանը», որը հաստատվեց Վրաստանի կառավարության 2009 թվականի մայիսի 8-ի թիվ 348 կարգադրությամբ: Վերինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմին¹ հանձնարարվեց ազգային փոքրամասնությունների նկատմամբ մշակել քաղաքականություն, համակարգել և ներկայացնել հաշվետվություն: Նշված գործընթացները համակարգված ուղղորդելու նպատակով, Վերինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի 2009 թվականի հուլիսի 3-ի թիվ 14 հրամանագրի հիման վրա, ստեղծվեց պետական միջգերատեսչական հանձնաժողով:

Հանձնաժողովի կազմի մեջ մտան ինչպես Հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի ղեկավարությունը և պատասխանատու աշխատակիցները, այնպես էլ պետական հիմնարկությունների, նախարարությունների և կազմակերպությունների, քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոյի և էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների «Պետական լիազոր-նահանգապետի վարչությունների» ներկայացուցիչները:

¹ Վրաստանի կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 362 Որոշմամբ, Վերինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի անվանումը փոփոխվեց և կոչվեց Հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ, փոփոխությունը գործարկվեց 2014 թվականի հունվարի 1-ից:

Հանձնաժողովի աշխատանքում ընդգրկված են հետևյալ հաստատությունները.

- Հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը,
- Վրաստանի Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարությունը,
- Վրաստանի Աշխատանքի, Առողջության և Սոցիալական պաշտպանության նախարարությունը,
- Վրաստանի Տարածաշրջանային զարգացման և Ենթակառույցի նախարարությունը,
- Վրաստանի Արդարադատության նախարարությունը,
- Վրաստանի Կրթության և գիտության նախարարությունը,
- Վրաստանի Սպորտի և Երիտասարդության գործերի նախարարությունը,
- Վրաստանի Ներքին գործերի նախարարությունը,
- Վրաստանի նախագահի վարչակազմը,
- Վրաստանի Ազգային Անվտանգության խորհրդի աշխատակազմը,
- Վրաստանի Ժողովրդական պաշտպանի աշխատակազմը,
- Վրաստանի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը,
- Քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոն,
- Քվեմո Քարթլիի պետական լիազոր-նահանգապետի վարչությունը,
- Սամցխե-Ջավախեթի պետական լիազոր-նահանգապետի վարչությունը,
- Կախեթի պետական լիազոր-նահանգապետի վարչությունը,
- Վրաստանի Հանրային Հեռարձակումը,

- ՀԻԻԱ – Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը,
- ՀԻԻԱ – Գնահատման և քննությունների ազգային կենտրոնը,
- Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանը:

2015 թվականի հունվարին պետական միջգերատեսչական հանձնաժողովի կազմը թարմացվեց և ավելացան նոր հաստատություններ.

- Վրաստանի Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարությունը,
- Վրաստանի Գյուղատնտեսության նախարարությունը,
- ՀԻԻԱ – Զ.Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը,
- ՀԻԻԱ – Դ.Աղմաշենեբելիի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիան,
- Ք.Բաթումի քաղաքապետարանը:

Վերը նշված հայեցակարգի գործողության ժամկետը լրացավ 2014 թվականին, այստեղից ելնելով՝ պետական նախարարի աշխատակազմը պատրաստեց նոր փաստաթուղթ: Մինչև նոր ռազմավարական փաստաթղթի մշակումը, պետական նախարարի աշխատակազմը, անկախ փորձագետների խմբի հետ միասին, պատրաստեց Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2009-2014 թթ. Գործնական պլանի կատարման գնահատման փաստաթուղթ, ինչը հիմք դրեց կառավարության նոր և առավել արդյունավետ քաղաքականության ձևավորմանը: Համապատասխանաբար, նոր ռազմավարական փաստաթուղթը

հիմնվում է անցած տարիներին իրականացված գործունեության արդյունքներին և միաժամանակ նախատեսում է հանձնարարականներ և առաջարկություններ:

Քաղաքացիական ինտեգրման նոր ռազմավարության վրա աշխատանքի գործընթացը բաց էր և թափանցիկ, որն իր հերթին ստեղծում էր նշված ոլորտում աշխատող բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցության հնարավորություն: Ռազմավարությունը և Գործնական պլանը քննարկվեցին Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի, տեղական քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների, Վրաստանի խորհրդարանի մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման կոմիտեի, քաղաքական կուսակցությունների և փորձագետների, ինչպես նաև իրենց տարածաշրջաններում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Փաստաթղթի միջազգային հետաքննությունն անցկացրեց ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ-ի Գերագույն կոմիսարի գրասենյակը:

2015 թվականի օգոստոսի 17-ին Վրաստանի կառավարության թիվ 1740 կարգադրությամբ հաստատվեց քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը և *2015-2020 թվականների Գործնական պլանը*:

Փաստաթուղթը հիմնվում է «Առավել բազմազանություն, առավել ինտեգրում» մոտեցման վրա և նպատակադրված է աջակցություն ցուցաբերել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում իրավահավասարության քաղաքականության իրականացմանը, ապահովել էթնիկ փոքրամասնությունների լիարժեք մասնակցությունը, նաև խրախուսել նրանց

նույնականությունն ու մշակույթի պահպանումը և հանդուրժողական միջավայրը:

Պետական նախարարի աշխատակազմին նոր ռազմավարական փաստաթղթի մշակման գործում, և նաև հաշվետու ժամանակաշրջանում պլանավորված միջոցառումների իրականացմանը ակտիվորեն աջակցում էր Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիան (UNAG) «Ազգային ինտեգրման ուժեղացումը Վրաստանում» նախագծի շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցը արտացոլում է 2015 թվականի Գործնական պլանով նախատեսված, Վրաստանի իշխանության կողմից իրականացված միջոցառումները:

I. Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին

Վերը նշված ռազմավարական նպատակի շրջանակներում նախանշված միջակա նպատակների և խնդիրների կատարման կոնկրետ ծրագրեր/նախագծեր և միջոցառումներ իրականացրեցին. Վրաստանի Արդարադատության և Ներքին գործերի նախարարությունները, Պատժակատարողական և պրոբացիայի նախարարությունը, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, Վրաստանի հանրային հեռարձակումը, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը,

ինչպես նաև էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների պետական լիազոր-նահանգապետի վարչությունները:

Աջակցություն փոքրաթիվ և կարիքավոր էթնիկ փոքրամասնություններին

Գնչուների գրանցում

Վրաստանի Արդարադատության նախարարության պետական սերվիսների զարգացման գործակալությունը «Նորամուծությունների և բարեփոխումների կենտրոն» ոչկառավարական կազմակերպության հետ միասին իրականացնում է գնչուների գրանցում:

Գնչուների գրանցման մասին 2011-2015 թվականների վիճակագրական տվյալներ

Գործավարության կատեգորիա	Ընդհանուր գումար	Ավարտվեց գործավարությունը	Գործավարությունն ընթանում է
Քաղաքացիության որոշում	13	13	0
Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ	15	14	1
Ծննդյան փաստ	36	36	0
Ընդհանուր	64	63	1

գումարային			
------------	--	--	--

Հասարակական կենտրոններում անվճար իրավաբանական խորհրդատվությունների արմատավորման նպատակով, **Արդարադատության նախարարության պետական սերվիսների զարգացման գործակալությունը** ձևակերպեց համագործակցության Հուշագիր իրավաբանական օգնության ծառայության հետ: Հուշագրի շրջանակներում, 5 հասարակական կենտրոններում արմատավորվեց անվճար իրավաբանական խորհրդատվություն, այդ թվում Սարթիճալա գյուղի հասարակական կենտրոնում, որտեղ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները օգտվեում են անվճար իրավաբանական խորհրդատվության սերվիսից:

Վրաստանի Կրթության և գիտության նախարարությունը մշակեց և իրականացրեց քաղաքականություն սակավաթիվ և կարիքավոր էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ.

- Մշակվեցին և հաստատվեցին ազգային փոքրամասնությունների ուսումնական պլանը և սակավաթիվ փոքրամասնությունների լեզուների չափանիշերը I-VI դասարանների համար: (Այս լեզուների թվին են պատկանում. չեչեներենը, ասորենը, քրդերենը, օսերենը, հունարենը, ուդեների լեզուն,),
- Կազմակերպվել են հանդիպումներ շահագրգիռ դպրոցների վարչական և մանկավարժական անձնակազմի հետ նրանց իրազեկման նպատակով,

- Դպրոցներից ներկայացված պաշտոնական խնդրանքի հիման վրա անհատական-իրավական ակտով հաստատվել է այն դպրոցների ցուցակը, որտեղ սակավաթիվ էթնիկ փոքրամասնությունների լեզուների ուսուցումը առաջարկված կլինի ընտրական դասընթացի տեսքով,
- Պատրաստվել է 2014 թվականին անցկացված «Կարիքավոր խմբերի մասնագիտական կրթության մատչելիության» հետազոտության զեկույցը, որի արդյունքում բացահայտվեցին նաև մասնագիտական կրթությանը ընդգրկվելու էթնիկ փոքրամասնությունների պատնեշները: Հետազոտության արդյունքներին հենվելով, արդեն մշակվում են մասնագիտական կրթությանը կարիքավոր խմբերի ընդգրկման մատչելիության մեխանիզմները, որտեղ նկատառված են էթնիկ փոքրամասնությունների կարիքները:

Գենդերային մեյնստրիմինգ (ուղղորդում)

Քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոն՝ Սակրեբուլոյին կից էթնիկ փոքրամասնությունների համակարգման խորհրդի հետ համատեղ անցկացրեց հանդիպումներ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց հետ, ինչպես նաև քննարկումներ՝ մայրաքաղաքում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց կարիքների, միջոցառումների պլանավորմանը և իրականացմանը նրանց ընդգրկվածության մասին:

Կրթության և գիտության նախարարության համընդհանուր կրթության կառավարման և զարգացման դեպարտամենտի կողմից վաղ ամուսնության կանխարգելման նպատակով իրականացվեց «Ծնողների կրթության և ընդգրկվածության ենթածրագիր»: Ենթածրագրի շրջանակներում մշտապես

անց են կացվում արտագնա միջոցառումներ Վրաստանի տարածաշրջաններում, որտեղ առանձնապես հաճախ են ամրագրվում վաղ ամուսնության փաստերը: Իրականացվեց տասը հանրային հանդիպում Լազոդեխի, Բոլնիսի և Մառնեուլի մունիցիպալիտետներում: Հանդիպումներին մասնակցում էին էթնիկ փոքրամասնությունների ծնողներ, ուսուցիչներ, հետաքրքրվող անձինք, ինչպես նաև հոգեբաններ, տեղական իրավապահ և սոցիալական աշխատողներ: Նշված միջոցառումներն իրականացվում են Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի Վրաստանի ներկայացուցչության հետ համագործակցությամբ:

Պետական վարչարարության և իրավապահ մարմինների և մեխանիզմների մատչելիության ավելացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար

Վրաստանի Ներքին գործերի նախարարության գործունեություն .

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) ակադեմիան ակտիվորեն իրականացնում էր էթնիկ փոքրամասնությունների իրավահավասարության պաշտպանության քաղաքականություն: Այս տեսանկյունից անցկացվեցին հետևյալ միջոցառումները.

- Մշակվեց մեկամյա կրթական ծրագիր վրաց լեզվից,
- ՆԳՆ ակադեմիայում ուստիկանության աշխատակիցների համար անցկացվեցին վարժանքներ խտրականության անթույլատրելիության մասին, որին մասնակցում էին նաև Գլխավոր Դատախազության և Ժողովրդական պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

ՆԳՆ ակադեմիայում գործում են տարբեր ծրագրեր, որոնցում նկատառված են հետևյալ ուսումնական դասընթացները. Մարդու իրավունքները («Խտրականության ամեն ձևի վերացման մասին» Վրաստանի օրենք), Ոստիկանությունը բազմազգ հասարակությունում, Հասարակությանը կողմնորոշված ոստիկանություն:

ՆԳՆ ակադեմիայի կողմից էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, Կրթության նախարարության հետ համագործակցությամբ, ակադեմիայի հենքի վրա կազմակերպվեցին ճանաչողական բնութի շրջայցեր, ինչը հետապնդում է դպրոցի աշակերտների շրջանում գիտակցության բարձրացման նպատակ: Հաշվետու ժամանակաշրջանում ՆԳՆ ակադեմիայում տարբեր ուսումնական ծրագրերից դասընթաց անցան էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Վրաստանի Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության կողմից իրականացված գործունեություն .

Վրաստանի Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության գործունեության առաջնահերթային ուղղություններից մեկը Քրեա-կատարողական համակարգի բարեփոխումն է և դրա վերափոխումը որպես ժամանակակից ճկուն ինստիտուտի, որն ապահովում է ազատագրված անձանց իրավունքների պաշտպանությունը մարդու իրավունքների ոլորտում առկա միջազգային չափանիշերին համապատասխան:

- Հասարակական սերվիսների և ընթացիկ պետական ծրագրերի մասին էթնիկ փոքրամասնությունների լեզուներով տեղեկատվական նյութերի պատրաստում և դրանց տարածում: Մեղադրյալ/դատապարտյալների համար բանտարկության և

պատժա-կատարողական հիմնարկություններում բժշկական սերվիսների մասին տպագրվեց բժշկական սպասարկման չափանիշի Ուղեցույց վրացերեն, ադրբեջաներեն, հայերեն, անգլերեն, ռուսերեն, թուրքերեն և պարսկերեն լեզուներով:

- **Էթնիկ փոքրամասնություններին պատկանող մեղադրյալ/դատապարտյալների ապահովումը թարգմանչական ծառայությամբ:** Նախարարության և թարգմանչական բյուրոյի միջև գործող Պայմանագրի հիման վրա, 2015 թվականի ընթացքում դատապարտյալները 405-անգամ օգտվել են գրավոր թարգմանությունից: Դրա հետ միասին, համապատասխան պահանջի հիման վրա, վերը նշված բյուրոյի կողմից ապահովվել է նրանց բանավոր խոսքի թարգմանությունը, օրենսդրությամբ սահմանված կարգի նկատառումով:

Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի, Կախեթի տարածաշրջանների պետական լիազոր-նահանգապետի վարչությունների կողմից իրականացված գործունեություն

Հաշվետու ժամանակաշրջանում Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Մառնեուլի, Դմանիսի, Թեթրիձղարոյի, Գարդաբանի և Ծալկայի մունիցիպալիտետներում տեղական իշխանության ներկայացուցիչները բնակչության հետ պարբերաբար անց են կացնում տեղեկատվական հանդիպումներ օրենսդրական նորույթներին, հակախտրականության կարգավորումներին, էթնիկ փոքրամասնությունների իրավունքներին և օրենսդրություններին նրանց ծանոթացնելու նպատակով:

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում, հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների դիմումներին արձագանքը կատարվում էր օրենքով սահմանված ընթացակարգերի

պաշտպանությամբ: Համապատասխանաբար, քաղաքացիներին ցուցաբերվել է պատշաճ օգնություն/խորհրդատվություն: Նմանապես ինտենսիվ բնույթ էին կրում պետական լիազոր-նահանգապետի հանդիպումները բնակչության հետ, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակեցված մունիցիպալիտետներում՝ Նինոծմինդայում և Ախալքալաքում: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, պետական լեզուն չիմանալու պատճառով չեն ստեղծվել հիմնախնդիրներ, նրանց մատուցվել են համապատասխան բանավոր պարզաբանումներ մայրենի կամ նրանց հասկանալի լեզվով: Երկրամասի վարչությունում և մունիցիպալիտետներում գործում է «Մեկ լուսամուտի սկզբունքը», ցանկության դեպքում նրանք հանդիպում են համապատասխան ծառայության ներկայացուցիչներին: Նահանգի վարչությանը տարբեր կարիքների մասին դիմումով դիմել է 1671 քաղաքացի, որոնցից էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ է 148-ը: Դիմումներում քաղաքացիները, չնայած էթնիկ պատկանելությանը, առավելապես խնդրում են սոցիալական օգնություն:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների համար հավասար ընտրական միջավայրի ապահովում

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) ակտիվորեն շարունակում էր գործունեությունն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողներին հավասար ընտրական միջավայր ստեղծելու համար: Այս նպատակով իրականացվեցին մի շարք միջոցառումներ: Վրաստանի Ընտրական վարչությունը որոշ ընտրական տարածքներում անցկացրեց տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ Սակրեբուլոյի և Վրաստանի խորհրդարանի միջակա ընտրություններ:

Ընտրական ընթացակարգերի հետ կապված նյութերի թարգմանություն էթնիկ փոքրամասնությունների լեզուներով

- Վրաստանի խորհրդարանի 2015 թվականի հոկտեմբերի 31-ի միջակա ընտրությունների համար Սագարեջոյի մարզային ընտրական հանձնաժողովում ստեղծված 12 ընտրական տեղամասի համաձայն, ադրբեջանցի ընտրողներով հոծ բնակեցված վայրերի նկատառումով², թարգմանվեց և տպագրվեց երկլեզու (վրաց-ադրբեջաներեն) ընտրական բյուլետեն, ինչպես նաև ադրբեջաներեն լեզվով թարգմանվեցին համընդհանուր ընտրացուցակը, ընտրողների հուշաթերթիկը և քվեաթերթիկների լրացման կարգը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ադրբեջանցի անդամների համար վրաց-ադրբեջաներեն լեզվով թարգմանվեց և տպագրվեց. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ձեռնարկ հրահանգը, հանձնաժողովի նախագահի հուշագրային հրահանգը, ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթները, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի իրավասությունները Քվեարկության օրը, Ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամի գործառույթները, ընտրական քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամի գործառույթները, փոխադրական քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամի գործառույթները և քվեարկության տեղամասում սահմանափակ կարողություններով ընտրողների նկատմամբ վերաբերմունքի մասին հրահանգը: Դրա հետ միասին «Քվեարկության օրվա ընթացակարգեր» ուսումնական ֆիլմը տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին մատչելի էր սուբտիտրերով: Ընտրողների տեղեկատվության մատչելիության ապահովման նպատակով, ԿԸՀ-ի

²Էթնիկ ադրբեջանցիներով բնակեցված գյուղեր. Դուզագրամա, Թուլարի, Իորմուղանլո, Կազլարի, Լամբալո, Պաղո, Քեշալո, Միծմաստիանի:

պաշտոնական կայք-էջին (www.cesko.ge) տեղադրված համընդհանուր ընտրացուցակի տվյալները ադրբեջաներեն լեզվով մատչելի էին Սազարեջոյի շրջանում հոծ բնակվող ադրբեջանցի ընտրողներին: ԿԸՀ-ի պաշտոնական կայք-էջի (www.cesko.ge) «Էթնիկ փոքրամասնություններ» բաներում, մատչելի էին ընտրական հարցերի կապակցությամբ ադրբեջաներեն լեզվով թարգմանված փաստաթղթերը: Ադրբեջաներեն էր թարգմանվել նաև Քվեարկության օրվա ընթացակարգերի մասին ԿԸՀ-ի կողմից պատրաստված տեղեկատվական հոլովակը, որը տեղադրվեց Հանրային հեռարձակման և Կախեթի տարածաշրջանային հեռուստատեսությունների էթերային ցանցում:

Փոքր դրամաշնորհների տրամադրում քաղաքացիական կազմակերպությունների և փոքրամասնությունների համայնքներին՝ ընտրությունների նշանակության մասին տեղեկատվական քարոզչություն վարելու և ընտրական մշակույթը հզորացնելու նպատակով

2015 թվականի սկզբին ԿԸՀ-ին կից գործող ՀԻԻԱ – Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը, ընտրական գործընթացին էթնիկ փոքրամասնությունների մասնակցությանը օժանդակության նպատակով, ֆինանսավորեց 7 ոչկառավարական կազմակերպությունների նախագիծ: Մասնավորապես. 1) «Բազմազգ Վրաստան» համընդհանուր քաղաքացիական շարժման ներկայացրած «Մտածված աջակցություն-օժանդակություն ընտրական գործընթացի առաջիկա ընտրական ցիկլերին Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ասպինձայի, Ախալցխիլեի, Ծալկայի և Բորջոմի ընտրական տարածքներում բնակվող ազգությամբ հայ ընտրողների քանակական և որակական լայն ընդգրկվածությանը», 2) «Մեդիայի զարգացման հիմնադրամ» ոչկառավարական կազմակերպության «Ժողովրդավարության շրջայց. ընտրություններից մինչև ինստիտուտներ» նախագիծը, ինչը նախատեսում էր երիտասարդության մոբիլիզացում,

նրանց նախապատրաստում և նույնականացված ընտրական գործընթացների վարում, 3) «Բազմազգ Վրաստանի կանայք» ոչկառավարական կազմակերպության նախաձեռնությունը, որի նպատակն էր կանանց պաշտպանության մեխանիզմի գործարկումը, Քվեմո Քարթլիի տարածաշրջանում բնակվող կին էթնիկական/կրոնական փոքրամասնությունների ակտիվության օժանդակությունը, 4) «Հասարակական նախաձեռնությունների խումբ» ոչկառավարական կազմակերպության նախագիծը, որի նպատակն էր էթնիկ գնչուների, ավարացիների և ուղենների իրազեկումը, քաղաքացիական ընդգրկվածության և մոտիվացիայի բարձրացումը, 5) «Քաղաքացիական ինտեգրման հիմնադրամ» ոչկառավարական կազմակերպության կողմից ներկայացված նախագիծը, որի նպատակն էր Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջաններում բնակվող ադրբեջանցի բնակչության իրազեկումը քաղաքացիական և ընտրական մշակույթի մասին, նրանց հասարակական և քաղաքական ընդգրկվածության բարձրացումը: Նմանապես 6) և 7) «Վրաստանի ադրբեջանցի կանանց միությունը» և «Քաղաքացիական կրթության զարգացման բազմազգ ռեսուրս-կենտրոն» ոչկառավարական կազմակերպությունները իրականացրեցին նախագծեր, որոնք ծառայում էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողի քաղաքական սոցիալիզացմանը, ընտրական մշակույթի բարձրացմանը և լիարժեք ինտեգրմանը երկրի ընտրական տարածությունում:

Նախագծերի իրականացման աշխարհագրական տեսադաշտն էր. Ք.Թբիլիսի, Սամցխե-Ջավախեթի, Քվեմո-Քարթլի, Շիդա Քարթլի, Կախեթի, Աճարա (Բաթումի, Քոբուլեթի), Իմերեթի (Քուրախի): Իսկ իրականացման ժամանակաշրջանն ընդգրկում էր 6 ամիս, 2015 թվականի հունիսի 15-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 15-ը: Նախագծերի ընդհանուր բյուջեն կազմեց 355 155 լարի:

2015 թվականի հոկտեմբերի 31-ի միջակա ընտրություններին, ԿԸՀ-ն հայտարարվելիք դրամաշնորհային մրցույթի համար (II փուլ) որպես

առաջնային ուղղությունն առանձնացրեց. էթնիկ փոքրամասնությունների ընտրողների իրազեկումը և մատչելիությունը 2015 թվականի հոկտեմբերին կայանալիք Վրաստանի խորհրդարանի միջակա ընտրությունների մասին: Իսկ ԿԸՀ-ին կից գործող ՀԻԻԱ – Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխման և ուսուցման կենտրոնը (Ուսուցման կենտրոն) նշված ուղղությամբ ֆինանսավորեց 6 ոչկառավարական կազմակերպություն՝ «Մեդիա ցենտրի Կախեթի»-ն, «Մեցենատ» լրագրողների ասոցիացիա - հասարակական զարգացման միությունը», «Երիտասարդության զարգացման կենտրոն - XXI»-ը, «Թգուդա» ազատ զարգացման և իրավունքների պաշտպանության ասոցիացիան, «Հասարակական պաշտպանը», «Կանայք հանուն ապագայի», որոնք ընտրություններին մասնակցության տեսանկյունից ընտրողների իրազեկվածության և գիտակցության բարձրացման նպատակով իրականացրել են համապատասխան նախագծեր: Նախագծերի իրականացման աշխարհագրական տեսադաշտն էր. Սագարեջոյի շրջանի Իորմուղանլո, Դուզագրամա, Թուլարի, Քեշալո, Լամբալո, Կակաբեթի, Ուդաբնո, Ղանդաուրա, Բադիաուրի գյուղերը, նախագծերի ընդհանուր բյուջեն կազմեց 105 291 լարի:

Ընտրական ընթացակարգերի կապակցությամբ էթնիկ փոքրամասնությունների ընտրական վարչության անդամների նախապատրաստում

2015 թվականի հոկտեմբերի 31-ի միջակա ընտրությունների համար ԿԸՀ-ին կից գործող ուսուցման կենտրոնն ապահովեց տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների որակավորման բարձրացումը, որն ընթանում էր 4 փուլերով: Նշված վարժանքների շրջանակներում էթնիկապես ադրբեջանցի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար ուսումնական ընտրական փաստաթղթերի մատչելիությունն ապահովված էր նրանց հասկանալի լեզվով:

Լրատվական միջոցներ և տեղեկատվության մատչելիություն

Վրաստանի Հանրային հեռարձակում

Հաշվետու ժամանակաընթացքում Հանրային Հեռարձակումն իրականացրեց 2015 թվականի Գործնական պլանով սահմանված միջոցառումներ: Հեռուստատեսային սեզոնի ժամանակաշրջանում շարունակվեց «Մոամբե» լրատվական ծրագրի և 2-րդ Ալիքի ուղիղ եթերով հեռարձակումը՝ աբխազերեն, օսերեն, հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով: (Թեմաների ընտրությունն իրականացվում էր հենվելով հիմնականում վրացալեզու «Մոամբե»-ի նյութերին: Մեկ կոնկրետ լեզվով թողարկումը շարունակվում է միջին հաշվով 10-12 րոպեի ընթացքում): Վրաստանի Հանրային հեռարձակումը, անցյալ հեռուստատեսային սեզոնում նույնպես հեռուստադիտողին առաջարկեց իր արտադրանքը, ոչ միայն սեփական եթերի միջոցով, այլև տարածաշրջանային հեռուստակայանների եթերով նույնպես: Անցկացված մրցույթի հիման վրա Հանրային հեռարձակումը 2014-2015 թթ. հեռուստատեսային սեզոնի համար Սամցխե-Չավախեթի և Քվեմո Քարթլիի հեռուստաընկերություններից ձեռք բերեց եթերային ժամանակ (այսպես կոչված «Պրայմ թայմ» 20:00 ժամից մինչև 23:00 ժամը): Բոլնիսի «Բոլնել» հեռուստաալիքին մատուցվում է ադրբեջաներեն «Մոամբե», Նինոծմինդայի TV «Փարվանային» և Ախալքալաքի „ATV 12“-ին մատակարարվում է հայերեն «Մոամբե», Զուլգիդի «Օդիշի» եթերով թողարկվում է աբխազերեն «Մոամբե»: Այս արտադրանքը գործընկեր հեռուստատեսությունները հաղորդում են ուղիղ եթերում: Տեղական կայաններն ունեն հաղորդումները կրկնակի հեռարձակելու հնարավորություն առավոտյան և երեկոյան ժամերին, ինչպես նաև գովազդի տեղադրման իրավունք մինչև թողարկումը կամ դրանից հետո:

Մինչև հոկտեմբեր ամիսը «Մեր բակը» ամենշաբաթյա հաղորդումը Հանրային հեռարձակման եթերով հաղորդվում էր ամեն շաբաթ 17:00 ժամին: 2015 թվականի ընթացքում հաղորդումն ուներ հեռուստաժուռնալի տեսք, թեման՝ էթնիկ փոքրամասնություններ, մշակույթ, ավանդույթ և հիմնախնդիրներ:

Ամենօրյա 23:00 ժամին, 2-րդ Ալիքի եթերում հաղորդվում է ռուսերեն հեռուստատեսային լրատվական-վերլուծական հաղորդում «Իսկական ժամանակ» („Настоящее время“): Այն ներկայացնում է Ազատություն ռադիոյի Եվրոպա/Ազատություն ռադիո և Ամերիկայի ձայնի միասնական նախագիծը, որն իրականացվում է Վրաստանում, Էստոնիայում, Լատվիայում, Լիտվայում, Մոլդովայում և Ուկրաինայում գործող հասարակական և մասնավոր հաղորդումների հետ համագործակցությամբ:

Ռադիոհաղորդում

Հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնությունների լեզուներով շարունակվեց հաղորդումը նմանապես՝ «Առաջին ռադիոյի» եթերով: Տարվա ընթացքում ռադիոեթերում էթնիկ փոքրամասնությունների լեզուներով հաղորդվում էր «Մոամբե»-ի նորությունների լրահավաքի առողիոտարբերակը: Աբխազական, օսական, ադրբեջանական, հայկական և ռոսական լեզուներով լրատվական թողարկումներին շաբաթը մեկ անգամ ավելանում էր նաև ռադիոծրագիր քրդական լեզվով:

Հանրային հեռարձակման կողմից էթնիկ փոքրամասնություններին հասկացված ժամանակ

Հաղորդումների ձևաչափ	Անվանում	Տևողություն, րոպե	Թվաքանակ, ամիս	Գումար, ժամ
Հեռուստատեսային լրատվական	Ազգային Մոսմբե	60	12	300
Ռադիո Լրատվական	Ազգային Մոսմբե	60	12	300
Ռադիո Լրատվական	Քրդական ամենշաբաթյա	20	12	16
Լրատվական-վերլուծական	«Իսկական ժամանակ» (Ազատություն-Հանրային հեռարձակում)	26	12	324
Ճանաչողական	«Մեր բակը»	20	12	14
Ընդամենը տարեկան, ժամ				954

Հատկանշական է, որ թվանշանային հեռարձակման անցնելու կապակցությամբ, թվանշանային Հեռարձակման գործակալությունը պատրաստեց տեղեկատվական բուկլետներ փոքրամասնությունների լեզուներով, ընդ որում 10 000 ադրբեջաներեն, 10 000 ռուսերեն, 10 000 հայերեն, որոնց բաշխումը իրականացվեց պետական լիազորնահանգապետերի վարչությունների և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

Տպագիր զանգվածային լրատվական միջոցներ

2015 թվականին շարունակվեց ոչվրացալեզու մամուլի ֆինանսական աջակցությունը: Ֆինանսների նախարարության օգնությամբ հրատարակվեց հայալեզու «Վրաստան» թերթը և ադրբեջանալեզու «Գուրջիստան» թերթը: Լրագրերը տարածվեցին ինչպես Թբիլիսիում, այնպես էլ էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում:

Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով զանգվածային լրատվական միջոցները և լրատվության մատչելիությունն ապահովելու ուղղությամբ հաշվետու ժամանակաշրջանում իրենց լիազորությունների շրջանակներում ակտիվ գործունեություն իրականացրին **Պատժա-կատարողական և պրոբացիայի, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները:**

- Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության և Հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի հետ համագործակցության շրջանակներում, 2015 թվականի մարտի 11-ից, ամիսը երկու անգամ, բոլոր քրեակատարողական հիմնարկությունների գրադարաններին փոխանցվում են ադրբեջանական «Ռեզիոն պրես» և «Գուրջիստան», ինչպես նաև հայկական «Վրաստան» թերթերը: Նշված տպագիր զանգվածային լրատվական միջոցները մատչելի են բոլոր դատապարտյալներին:
- Քրեակատարողական հիմնարկություններում դատապարտյալներին մատչելի են թուրքական և ռուսական հեռուստատեսային ալիքները:
- Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ լրագրողների համար AGFM- ռադիոյով, (վրացական ռադիո

ադրբեջանական լեզվով) իրականացվեց ուսումնական վարժանք-
դասընթաց «Ռադիո ժուռնալիստիկան գանգվածային
հաղորդակցությունում» նախագծով, որը նախատեսում էր
ռադիոժուռնալիստիկայի մասնագիտությամբ հետաքրքրվող
էթնիկապես ադրբեջանցի երիտասարդների տեսական և գործնական
ունակություն-հմտությունների տիրապետում: Նախագծի արդյունքում
AGFM- ռադիոյում աշխատանքի տեղավորվեց 5 ադրբեջանցի
երիտասարդ:

Տարածաշրջանային տպագիր գանգվածային լրատվական միջոց

2015 թվականից Քվեմո Քարթլիի տարածաշրջանում «Բոլնիսի» լրագիրը
տպագրվում է վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով, ինչպես նաև
գործում է www.bolnisi.ge համացանցային պորտալը: Ծախայում լույս է
տեսնում «Թրիալեթի էքսպրես» թերթը, իսկ Թեթրիձղարոյի
մունիցիպալիտետում՝ ամենամսյա «Դիդգորելեբի» թերթը, որի միջոցով
ոչվրացալեզու բնակչությանը մատակարարվում է անհրաժեշտ
տեղեկատվությունը: Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում լույս է
տեսնում վրացալեզու տարածաշրջանային ամենշաբաթյա «Հարավային
դարբաս» թերթը:

Մարդու իրավունքների վերաբերյալ հասարակայնության իրազեկվածության ապահովում

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի Արդարադատության
նախարարությունը ազգային և էթնիկ փոքրամասնություններով
բնակեցված Վրաստանի տարբեր տարածաշրջաններում անցկացրեց

թրեֆիկինգի դեմ պայքարի հարցերով տեղեկատվական հանդիպումներ մարդկանց վաճառքի և անօրեն գաղթի սպառնալիքների և ինքնապաշտպանության միջոցների մասին: Հանդիպումներին ներկա էին ազգային և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները: Նշված հանդիպումները կայացան թրեֆիկինգի դեմ պայքարի խորհրդի և գաղթի միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: 2015 թվականի վիճակագրական տվյալներ ազգային և էթնիկ փոքրամասնությունների համար անցկացված լրատվական հանդիպումների մասին.

Անցկացման ժամանակ	Վրաստանի տարածաշրջաններ	Հանդիպումների թվաքանակ	Ներկաների թվաքանակ
2015 թվականի ապրիլ	Ախալցխիսե Ախալքալաքի Նինոծմինդա	3	161
2015 թվականի հունիս	Թիանեթի Մառնեուլի	2	150
		Ընդամենը.	5 հանդիպ

			ում 311 մասնակ ից
--	--	--	----------------------------

Հաշվետու ժամանակաշրջանում **Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարությունն** իրականացրեց հետևյալ միջոցառումները.

- **Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ մեղադրյալ/դատապարտյալների իրազեկում իրենց իրավունքների մասին:** Տպագրվեց և տարածվեց նրանց իրավունքների մասին 500 հատ բրոշյուր ադրբեջաներեն, հայերեն, թուրքերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Դրա հետ միասին, սոցիալական ծառայության օգնությամբ, առանձին իրավունքների կամ վարչական միջոցառումների մասին տեղի է ունենում նրանց ակնթարթային տեղեկատվության մատակարարում:
- **Հանրային ծառայողների ապահովում վարժանքներով և նյութերով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների և հակախտրականության օրենդրության կապակցությամբ:** Նախարարության ուսումնական կենտրոնում իրականացվում է հանրային ծառայողների նախապատրաստում տարբեր ուսումնական ծրագրերով, այդ թվում «Առողջ միջավայրի ստեղծում և հիվանդությունների կանխարգելում պատժա-կատարողական հիմնարկություններում», «Կարիքավոր խմբերի հետ աշխատանք,

սուիցիդի (ինքնասպանության) կանխարգելում», «Մարդու հիմնական իրավունքները և ազատությունները», «Վարժանք պատժակատարողական հիմնարկությունների և աշխատակիցների համար», ովքեր աշխատում են կին-բանտարկյալների հետ» և այլն: 2015 թվականի ընթացքում անցկացվեց 23 վարժանք, որի շրջանակներում 419 ունկնդրի հաղորդվեց տեղեկատվություն ինչպես էթնիկ փոքրամասնությունների, այնպես էլ այլ այնպիսի առանձնահատուկ կարգի բանտարկյալների մասին, ինչպիսիք են. կին բանտարկյալները, անչափահաս բանտարկյալները, արտասահմանցի բանտարկյալները, կրոնական փոքրամասնությունները:

II. Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում

Սոցիալական շարժունություն

Վրաստանի Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարությունը, հաշվետու ժամանակաշրջանում, էթնիկ փոքրամասնությունների համար պլանավորեց և իրականացրեց լրատվական քարոզչություն առողջապահության և սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի մասին:

- 2015 թվականի վերջին ավարտվեց աշխատանքային շուկայի տեղեկատվական համակարգի (ԱՊԻՅ) ստեղծման կապակցությամբ անհրաժեշտ նախնական աշխատանքների գործընթացը և Աշխատանքային շուկայի պահանջների մասին սոցիալական պաշտպանության գործակալության երկրամասային

մասնաճյուղերում ապահովվեց տեղեկատվության մատուցումը էթնիկ փոքրամասնություններին: Լեզվական պատնեշի գոյության դեպքում գործակալության տեղական կադրի օգնությամբ, ապահովվում է բնակչության իրազեկումը նրանց հասկանալի լեզվով: Դրա հետ միասին անհրաժեշտության դեպքում, սոցիալական գործակալության աշխատակիցները ցուցաբերում են պատշաճ օգնություն, որպեսզի նրանք կարողանան գրանցվել աշխատանքի շուկայի կառավարման տեղեկատվական համակարգում:

- Շ հեպատիտի վերացման պետական ծրագրի շրջանակներում, էթնիկ փոքրամասնությունների հետ հաղորդակցության, իրազեկման և ծրագրի սերվիսների մատչելիության բարելավման նպատակով պլանավորվեց և իրականացվեց տեղեկատվական քարոզչություն ոչվրացալեզու բնակչության համար: Մշակվեցին և տպագրվեցին տեղեկատվական բուկլետներ ինչպես պետական, այնպես էլ հայերեն (5000 օրինակ), ադրբեջաներեն (5000 օրինակ) և ռուսերեն (5000 օրինակ) լեզուներով: Բուկլետները տեղադրվեցին նախարարության քաղաքացիների ընդունարանում, տարածվեցին սոցիալական պաշտպանության գործակալության երկրամասային մասնաճյուղերում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակչությամբ տարածաշրջաններում. Սամցխե-Ջավախեթում և Քվեմո-Քարթլիում:

Հատկանշական է, որ Վրաստանի Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարությունն ապահովում է Վրաստանի քաղաքացիների հաղորդակցությունն իր իրավասությունում առկա հարցերի մասին: Էթնիկ փոքրամասնությունների հետ հաղորդակցությունն իրականացվում է հիմնականում ռուսաց լեզվով, իսկ

հոծ բնակեցված տարածաշրջաններում՝ համապատասխան լեզվով, ոչպաշտոնական թարգմանիչների օգնությամբ:

2015 թվականի նոյեմբերին քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոյի և «Կանանց խորհուրդ» ոչկառավարական կազմակերպության համատեղ ջանքերով շուրջ 160 էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կին մասնակցեց բժշկական հետազոտություններին:

Ենթակառույցի վերականգնում

Հաշվետու ժամանակաշրջանում, Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառույցի նախարարությունը, տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում, էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում իրականացրեց ենթակառույցային նախագծեր:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում (Բուլնիսի, Գարդաբանի, Դմանիսի, Թեթրիձղարոյի, Սառնեուլիի, Ծալկայի մունիցիպալիտետներ, ք. Ռուսթավի) ֆինանսավորվեց **62 նախագիծ, 20 761 300 լարի** ընդհանուր արժողությամբ: **Գյուղին աջակցություն ծրագրի** շրջանակներում իրականացվեց **451 նախագիծ 6 719 669 լարի** ընդհանուր արժողությամբ:

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում (Ախալցխիսեի, Ախալքալաքի, Նինոծմինդայի, Բորջոմի, Ադիգենի, Սապինձայի մունիցիպալիտետներ) ֆինանսավորվեց **35 նախագիծ 13 818 000 լարի** ընդհանուր արժողությամբ: **Գյուղին աջակցություն ծրագրի** շրջանակներում իրականացվեց **387 նախագիծ 3 512 424 լարի** ընդհանուր արժողությամբ:

Կախերի տարածաշրջանում (Ախմետայի, Լագոդեիսի մունիցիպալիտետներ) ֆինանսավորվեց **24 նախագիծ 4 344 000** լարի ընդհանուր արժողությամբ: **Գյուղին աջակցություն ծրագրի** շրջանակներում իրականացվեց **192 նախագիծ 1 850 598** լարի ընդհանուր արժողությամբ:

Տարածաշրջաններում իրականացվեցին նաև նախագծեր **մունիցիպալային զարգացման հիմնադրամի** շրջանակներում: (Մանրամասն դիտեք **Հավելված 1**)

Էթնիկ փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը շուրջ 60 վրացի և Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախերի տարածաշրջաններից էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար իրականացրեց վարժանք «**Դարձիր երիտասարդ ձեռներեց**»: Վարժանքի նպատակն էր երիտասարդների հետաքրքրության, ընդգրկվածության, գիտակցության և մոտիվացիայի բարձրացումը գյուղատնտեսության ոլորտում, մասնավորապես ֆերմերային գործունեության ուղղությամբ: Նախարարության աջակցությամբ բացվեց նաև կարի տուն պանկիսեցի աղջիկների համար, ինչը կնպաստի քիստ կանանց աշխատանքային զբաղվածությանը և դրա հետ միասին, քիստական մշակույթի ժողովրդականացմանը:

III. Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի տիրապետման բարելավում

Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը և դրա ենթակայության ներքո գտնվող Հանրային Իրավունքի Իրավաբանական Անձերը

հաշվետու ժամանակաշրջանում շարունակեցին տարբեր ծրագրերի և նախագծերի իրականացումը:

Նախարարությունը, տեղական և միջազգային փորձագետների ընդգրկմամբ, սկսեց էթնիկ փոքրամասնությունների կրթության քաղաքականության փաստաթղթի մշակումը: Փաստաթուղթը վերաբերում է մինչդպրոցական, դպրոցական, մասնագիտական և բարձրագույն կրթությանը, ինչպես նաև մանկավարժական կադրերով ապահովմանը: Կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի Վրաստանի գրասենյակի աջակցությամբ, փաստաթղթի քննարկման և կատարելագործման նպատակով կայացավ եռօրյա կոնֆերանս: Կոնֆերանսի նպատակն էր նախարարության կողմից այս ոլորտում վերջին տարիներին անցկացված անալիտիկական աշխատանքների և իրականացված հետազոտությունների արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև էթնիկ փոքրամասնությունների հասարակությանը ինտեգրման Գործնական պլանի և ստանձնած պարտավորությունների կատարման մասին զեկույցը:

Որակյալ ընդհանուր կրթության մատչելիության աճ

Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների հանրակրթական դպրոցներում ուսուցիչների արհեստավարժության զարգացման և կարիերային առաջընթացին աջակցության ծրագիր

2015 թվականի սեպտեմբերից ուժի մեջ մտավ «Ուսուցչի գործունեության մեկնարկի, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեման», որին ընդգրկվելու պարտականությունը ստանձնեցին Վրաստանի հանրակրթական դպրոցի բոլոր ուսուցիչները, այդ թվում նաև ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների հանրակրթական դպրոցների ուսուցիչները:

2015 թվականին ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը մշակեց և հաստատեց «Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և կարիերային առաջընթացին աջակցության ծրագիրը»: Ծրագրի հիմնական նպատակ սահմանվեց ոչվրացալեզու հանրակրթական դպրոցների ուսուցիչների «Ուսուցչի գործունեության մեկնարկի, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեմային» և դրա հետ կապված փաստաթղթերին նրանց մայրենի լեզվով հասանելիությունը և մասնագիտական որակավորման բարձրացումը: Ծրագրի նպատակն է նաև տեղական առարկայական մարզիչներ պատրաստելը, ովքեր ապագայում տարածաշրջաններում կլինեն նշանակալից հենարան:

Ծրագրի բենեֆիցիարներն են Վրաստանի ոչվրացալեզու հանրակրթական հաստատությունների շուրջ 7500 գործող ուսուցիչներ. ադրբեջանալեզու՝ 3301, հայալեզու՝ 2933, ռուսալեզու՝ 1208 ուսուցիչներ:

Ծրագրի շրջանակներում.

- Թարգմանվեց և տպագրվեց (փաստաթղթերի ժողովածու) ուսուցչի գործունեության մեկնարկի, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեման աղբբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով,
- Թարգմանվեց և տպագրվեց ուսուցչի գործունեության մեկնարկի, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեմայի ուղեցույցի I մասը աղբբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով,
- Թարգմանվեց ուսուցչի ինքնագնահատման հարցաշարը աղբբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով,
- Թարգմանվեց վրաց լեզվի տիրապետման ինքնագնահատման աղյուսակը:

Առարկայական վարժանք-մոդուլների և ընթերցանության նյութի մշակում-հաստատում-թարգմանություն.

- Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների համար Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի կողմից մշակվեցին և հաստատվեցին ազգային ուսումնական պլանով նախատեսված առարկայական վարժանք ծրագրերը և դրանց հետ կապված վարժանքային նյութը, որն անցնելով մրցութային ընթացակարգերը, թարգմանվում է աղբբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի կայք-էջին www.tpdc.ge էլեկտրոնային տեսքով հասանելի են.

- ✓ Ուսուցչի գործունեության մեկնարկի մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեմայի (աղբբեջաներեն, ռուսերեն և հայերեն) վարկածները,

- ✓ Ուսուցչի գործունեության մեկնարկի մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեմայի ուղեցույցի I մասի (ադրբեջաներեն, ռուսերեն և հայերեն) վարկաձևերը,
- ✓ Ուսուցչի ինքնագնահատման հարցաշարի (ադրբեջաներեն, ռուսերեն և հայերեն) վարկաձևերը:

Իրականացվեց 2009 թվականից արմատավորված բիլինգային ծրագրի արդյունքների մոնիթորինգ Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի փորձարկման պիլոտային դպրոցներում:

Ազգային ուսումնական օլիմպիադա

2014-2015 ուսումնական տարում ազգային ուսումնական օլիմպիադա անցկացվեց Վրաստանում գործող բոլոր համընդհանուր կրթական հաստատություններում, այդ թվում նաև ոչվրացալեզու դպրոցներում: Նշված դպրոցներում ազգային ուսումնական օլիմպիադա անցկացվեց հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով, իսկ ոչվրացալեզու աշակերտները մասնակցեցին նաև վրաց լեզվից օլիմպիադային:

Վրաց լեզու (ոչվրացալեզու դպրոցներ) 1073
Առարկաներ (ադրբեջաներեն լեզվով) 1035
Առարկաներ (հայերեն լեզվով) 1639
Առարկաներ (ռուսերեն լեզվով) 731

Երրորդ փուլի հիման վրա բացահայտվեցին հաղթանակած աշակերտները, այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչներ: Մասնավորապես, վրաց լեզվից հաղթողների շրջանում չկար ոչ մի հայալեզու և ադրբեջանալեզու աշակերտ, իսկ ռուսալեզու՝ 10 աշակերտ:

Դպրոցի ավարտական քննություններ

2014-2015 ուսումնական տարվա դպրոցի ավարտական քննությունների հիման վրա, համընդհանուր կրթությունը հաստատող փաստաթուղթ ստացավ.

հայալեզու աշակերտ - 792

ադրբեջանալեզու ուսանող - 659

ռուսալեզու աշակերտ - 946

Բարձրագույն կրթության մատչելիության ավելացում

Բարձրագույն ուսումնական հաստատություն վրաց լեզվի նախապատրաստության ծրագրով ընդունվել կարող է Վրաստանի ցանկացած քաղաքացի, եթե նա ընդհանուր ունակությունները կհանձնի հայերեն կամ ադրբեջաներեն լեզվով: Լեզվի մեկամյա նախապատրաստական դասընթաց անցնելուց և 60 վարկ հավաքելուց հետո, ուսանողները նույն բարձրագույն ուսումնական հաստատությունում շարունակում են ուսումն իրենց ցանկալի բակալավրի կրթական ծրագրով

(Եթե ուսանողը վրաց լեզվից նախապատրաստության ծրագրից հայթայթի դրամաշնորհ 2250 լարի, բակալավրիատում ուսումը շարունակելու դեպքում նա կֆինանսավորվի մինչև ուսման ավարտը):

2015 թվականի համազգային քննություններից, Ընդհանուր ունակությունները ադրբեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա, Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու իրավունք ձեռք բերեց.

- Ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու թեստի հիման վրա 522 դիմորդ,
- Ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա 219 դիմորդ:

2015 թվականի Համազգային քննություններից, միայն ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա Պետական ուսումնական դրամաշնորհով ֆինանսավորվեց.

- Ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու թեստի հիման վրա 94 դիմորդ,
- Ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա 92 դիմորդ:

2015 թվականի համազգային քննություններ – ընդամենը գրանցվել էր 40 076 դիմորդ

Քննություն	Գրանցվեց	Քննությանը մասնակցեց	Սահմանը հատեց	Ձեռքբերեց ուսումը շարունակելու	Այդ թվում վրաց լեզվի նախապատրաստական ծրագրով	Ընդամենը դրամաշնորհ	Այդ թվում նախապատրաստական ծրագրով
------------	----------	----------------------	---------------	--------------------------------	--	---------------------	-----------------------------------

		9		իրավունք		ձեռքբերեց	
Ընդհանուր ունակությունները հայերեն	427	355	244	224	219	92	92
Ընդհանուր ունակությունները անգլերեն	1181	888	556	541	522	95	94

Ակադեմիական ծրագրերով ընդունվեցին.

5 դիմորդ, այդ թվում ովքեր հայոց լեզվով հանձնեցին ընդհանուր ունակությունները, դրամաշնորհ ստացավ 0,

19 դիմորդ, այդ թվում ովքեր անգլերեն լեզվով հանձնեցին ընդհանուր ունակությունները, դրամաշնորհ ստացավ 1,

Մեկ դիմորդ հանձնեց արխագրերն լեզվի և գրականության թեստ:

- *Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանում իրականացվում է «Հայագիտություն» բակալավրի ծրագիրը (Շնորհվելիք որակավորում՝ բանասիրության բակալավր):*

ՀԻԻԱ Դ.Աղմաշենեբելիի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիայի գործունեություն

ՀԻԻԱ Դավիթ Աղմաշենեբելիի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիա 2015 թվականի ընթացքում ընդունվեց 1 ոչվրացալեզու (ադրբեջանցի) դիմորդ, այսպես կոչված, "1+4 սխեմայի» համաձայն: Ակադեմիայում բակալավրի ծրագրով սովորում է 15 ոչվրացալեզու ուսանող:

Մասնագիտական և չափահասների կրթության ապահովում

Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի նպատակն է հանրային ծառայությունում որակյալ կադրերի պակասը հաղթահարել Վրաստանի ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված և բարձրալեռ տարածաշրջաններում հանրային աստիճանավորների որակավորման բարձրացման ճանապարհով, ինչպես նաև էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների հանրային աստիճանավորների, պետական հիմնարկների այլ աշխատակիցների ինտեգրմամբ միասնական պետական տարածությունում: Դպրոցի թիրախային խմբեր են ներկայացնում տեղական ինքնակառավարման մարմինների մունիցիպալիտետի վարչության և Սակրեբուլոյի աշխատակիցները, տեղական ինքնակառավարման կողմից կառավարվող ձեռնարկությունները և ոչձեռներեցային իրավաբանական անձանց աշխատակիցները, երկրամասային վարչությունների, կրթության նախարարության ռեսուրս-կենտրոնների և հանրային դպրոցի աշխատակիցները:

«Հանրային կառավարման և վարչարարության ծրագիր»

- Դպրոցի կողմից մշակվեց և իրականացվեց հասարակայնության հետ հարաբերության և հաղորդակցության նոր ճյուղային դասընթաց,
- Նույնպես մշակվեց նոր՝ ենթակառուցային նախագծերի տեխնիկական ապահովման և կառավարման ճյուղային դասընթաց, որի իրականացումը նույնպես պլանավորված է 2016 թվականի ուսումնական ծրագրում,
- Յուրաքանչյուր դասընթացի (հանրային կազմակերպությունների կառավարում, ֆինանսական մենեջմենտ և ներքին աուդիտ հանրային աստիճանավորների համար, պետական սեփականաշնորհումներ, մարդկային ռեսուրսների կառավարում և գործավարություն հանրային սեկտորում, հասարակայնության հետ հարաբերություն և հաղորդակցություն) մոդուլները արդյունավետ անցկացնելու համար ձևավորվեց հրավիրված հյուրի շարք (հրավիրված հյուրի կարգավիճակից օգտվում են կոնկրետ ոլորտում հաջողակ և փորձված մարդիկ),
- Յուրաքանչյուր դասընթացի համար պատրաստվեցին և տպագրվեցին ուսումնական ձեռնարկներ,
- Նորացվեց և ուսումնական գործընթացների կառավարման խորհրդի կողմից հաստատվեց ունկնդիրների գնահատման նոր համակարգ, որի համաձայն ավելացավ վկայական ստանալու համար անհրաժեշտ միավորների թվաքանակը,
- SDC խմբի հետ համագործակցության արդյունքում մշակվեց և պատրաստվեց հանրային կառավարման և վարչարարության ծրագրով ուսուցման կազմակերպման ընթացակարգ,
- Անցկացվեց հետազոտություն համակարգչային տեխնոլոգիաների դասավանդման հենքային ծրագրի ստեղծման կարիքների մասին, որի շրջանակներում հայթայթվեց տեղեկատվություն տարածաշրջաններում նման դասընթացների առկայության մասին, հանրային աստիճանավորների հետաքրքրության ցուցանիշը որոշելու և համակարգչային գրքայնության մակարդակը սահմանելու համար,

- Մշակվեց համակարգչային տեխնոլոգիաների դասավանդման հենքային ծրագիր, որն իրականացվեց 4 տարածաշրջանային ուսումնական կենտրոններում (Ախալքալաքի, Մառնեուլի, Գարդաբանի և Դմանիսի),
- Անցկացվեց համակարգչային տեխնոլոգիաների դասավանդման հենքային ծրագրի մարզիչների ընտրության մրցույթ, որի արդյունքում ընտրվեց 4 մանկավարժ: Նրանց համար անցկացվեց երկօրյա վարժանք ուսումնական դասընթացի իրականացման կապակցությամբ:
- Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում, Սամցխե-Ջավախեթի պետական լիազոր-նախանգապետի վարչության համագործակցությամբ և Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի գործընկերությամբ, դպրոցն իրականացրեց պիլոտային ծրագիր - «Գործավարության ավտոմատացված համակարգի (Edocument) գործառնությունների ուսումնական դասընթաց», որի շրջանակներում իրականացվում էր մունիցիպալիտետներում աշխատող տեղական ինքնակառավարման 78 աստիճանավորների վերապատրաստում: Վարժանքի շրջանակներում, մունիցիպալիտետների վարչական միավորումներում անմիջականորեն հանդիպումների ժամանակ, վերևում հիշատակված հարցի կապակցությամբ իրականացվեց տեղական ինքնակառավարման շուրջ 500 աստիճանավորի իրազեկության բարձրացում,
- Հանրային կառավարման և վարչարարության ծրագրի շրջանակներում վերապատրաստվեց 360 հանրային ծառայող,
- Համակարգչային տեխնոլոգիաների ուսուցման հենքային ծրագրի շրջանակներում վերապատրաստվեց 48 հանրային ծառայող,
- Հանրային կառավարման և վարչարարության ծրագրի կատարելագործման նպատակով անցկացվեց եռօրյա աշխատանքային հանդիպում ծրագրին ընդգրկված մարզիչների մասնակցությամբ:

Պետական լեզվի իմացության բարելավում

Վրաց լեզվի իմացության հարցը կրկին մնում է որպես լուրջ մարտահրավեր: Այս ուղղությամբ հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց նախորդ տարիների ընթացիկ ծրագրերի իրականացումը: Ինչպես նաև ստեղծվեց վրաց լեզվի տիրապետման մակարդակի գնահատման գործիք: *Ժամանակակից լեզուների ուսուցման, ուսման և գնահատման միասնականացման համաեվրոպական լեզվական քաղաքականությունը հենվում է լեզվի տիրապետման հատուկ համակարգի վրա, որը տարիների ընթացքում մշակվում և կատարելագործվում էր Եվրոպայի խորհրդում: (Լեզվի տիրապետման վեց մակարդակի համակարգ): Վերը նշված համակարգը ստեղծվել է վրաց լեզվի համար: Կրթական լեզվաբանությունում լեզվի տիրապետման լիազորության աճը արտահայտված է հետևյալ աստիճաններով. A, B, C, իսկ դրանցից յուրաքանչյուրը բաժանվում է երկու-ական հիմնական մակարդակի՝ A1-A2, B1-B2, C1-C2, մանրամասն դիտեք՝ http://geofl.ge/#!/page_doneebi - կայք-էջը:*

Ծրագիր «Վրաց լեզուն ապագա հաջողության համար»

«Վրաց լեզուն ապագա հաջողության համար» ծրագրի նպատակն է աջակցությունը Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջանների ոչվրացալեզու դպրոցների տեղի մանկավարժների մասնագիտական զարգացմանը և վրաց լեզվի ու հասարակական գիտությունների ուսուցման որակի բարելավմանը»:

Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի շրջանակներում իրականացվեցին հետևյալ միջոցառումները.

- 2015 թվականի հունվարին ՀԻԻԱ Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի «Սովորեցնել վրացերենը, որպես երկրորդ լեզու» և «Վրաց լեզուն ապագա հաջողության համար» ծրագրերի միավորման հիման վրա իրականացվեց ծրագրի փաստաթղթի և բյուջեի վերանայում: Միավորված ծրագրի անվանումը մնաց «Վրաց լեզուն ապագա հաջողության համար»,
- Հունվարին տեղի ունեցավ «Վրաց լեզուն ապագա հաջողության համար» ծրագրի 88 խորհրդատու-ուսուցչի՝ ուսուցչի գործունեության մեկնարկի, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեմայի շնորհանդեսը,
- Մարտին ծրագրի 21 մասնակցի փոխանցվեց ծրագրին մասնակցությունը հաստատող վկայական,
- Ապրիլ ամսին պատրաստվեցին ծրագրի նախկին մասնակիցների ցուցակները և առաքվեցին կրթության որակի զարգացման ազգային կենտրոն՝ մագիստրանտների կարգավիճակի և պետական դրամաշնորհի մասին տեղեկատվության վերստուգման նպատակով: Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնից ստացված տեղեկատվության մշակման հիման վրա, 2014-2015 ուսումնական տարվա գարնանային կիսամյակում մագիստրատուրայի կրթական աստիճանին ֆինանսավորվեց ծրագրի 176 նախկին մասնակից,
- Կրթության և գիտության նախարարության միջոցով կատարվեց տեղեկատվության հարցում Սամցխե-Ջավախեթի,

Քվեմո-Քարթլիի և Կախեթի տեղական կրթական ռեսուրս-կենտրոններից դպրոցներում վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցիչների ազատ տեղերի մասին,

- Ծրագրին մասնակցող խորհրդատու-ուսուցիչներին անցկացվեց երկարաժամկետ մեթոդական դասընթացի I մոդուլը «Ուսուցչի լիազորությունները և կուրիկուլումի պահանջները» (12 կոնտակտային ժամ),
- Հուլիսի 15-ից օգոստոսի 5-ը ներառյալ կազմակերպվեց ինտեգրված ամառային ճամբար, որին ընդգրկված էին 150 ոչվրացալեզու աշակերտ և ծրագրի 30 խորհրդատու-ուսուցիչ,
- Ծրագրի շրջանակներում հայտարարվեց խորհրդատու-ուսուցիչների ընտրության մրցույթ: Մրցույթի կարգով ընտրվեց 86 թեկնածու, այդ թվում՝ 67 հին մասնակից,
- Ծրագրի շրջանակներում հայտարարվեց վրացերենի, պատմության և աշխարհագրության օգնական ուսուցիչների ընտրության մրցույթ (այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների): Մրցույթի կարգով ընտրված 152 թեկնածուից 115-ը կենտրոնի հետ ձևակերպեց աշխատանքային պայմանագիր: Նրանցից 65-ը նախկին մասնակից էր:
- Մրցույթի կարգով ընտրված խորհրդատու-ուսուցիչների նոր հերթափոխի համար (19 ունկնդիր) անցկացվեց նախապատրաստական վարժանք հետևյալ մոդուլներից.
 - Մասնագիտական ունակություններ (18 կոնտակտային ժամ),
 - «Ուսուցչի լիազորությունները և կուրիկուլումի պահանջները» (12 կոնտակտային ժամ):

- Մրցույթի կարգով ընտրված օգնական ուսուցիչների նոր հերթափոխին (50 ունկնդիր) անցկացվեց նախապատրաստական վարժանք հետևյալ մոդուլներից.
 - Մասնագիտական ունակություններ (20 կոնտակտային ժամ),
 - «Ուսուցչի լիազորությունները և կուրիկուլումի պահանջները» (12 կոնտակտային ժամ),
 - Ինկլյուզիոն կրթություն (5 կոնտակտային ժամ):
- 2015-2016 ուսումնական տարվա մեկնարկի համար մրցույթի կարգով ընտրված խորհրդատու-ուսուցիչները բաշխվեցին թիրախային դպրոցներ՝ Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի կրթական ռեսուրս-կենտրոններից և թիրախային դպրոցներից ստացած վրացերենի, որպես երկրորդ լեզվի ազատ հաստիքների նկատառումով,
 - Ընթացիկ տարվա հոկտեմբերին, մրցույթի կարգով ընտրված 115 մասնակից վերաբաշխվեց Սամցխե-Ջավախեթի, Քվեմո-Քարթլիի և Կախեթի տարածաշրջանների ոչվրացալեզու դպրոցներ,
 - Ընթացիկ տարվա նոյեմբերին, ծրագրի 103 մասնակցի փոխանցվեց ծրագրին մասնակցությունը հաստատող վկայական,
 - Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների համար վրաց լեզվի դասընթացներ անցկացնելու նպատակով իրականացվեցին հետևյալ աշխատանքները.
 - Մշակվեց լեզվի տիրապետման ա1 մակարդակի և ա2 մակարդակի ուսումնական դասընթաց (որը ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչներին ներկայացնում է

ուսուցչի գործունեություն սկսելու, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեմային միանալու անհրաժեշտ մասնագիտական ունակությունների դասընթացի նախապայմանը),

- Լեզվական իրավասությունը սահմանելու նպատակով մշակվեց նախաթեստ (պրետեստ): Կենտրոնի համապատասխան փորձագետ-խորհրդատուների խորհրդատվություններից հետո պրետեստի անցկացումը ապահովված էր ծրագրին մասնակցող խորհրդատու-ուսուցիչների կողմից,
 - Ծրագրի շրջանակներում իրականացվեց ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների պրետեստների արդյունքների հավաքում և մշակում,
 - Տպագրվեց ա1 և ա2 մակարդակի ուսումնական նյութը:
- Հաշվետու տարվա հոկտեմբեր ամսին պատրաստվեցին ծրագրի նախկին մասնակիցների ցուցակները և ուղարկվեցին կրթության որակի զարգացման ազգային կենտրոն՝ մագիստրների կարգավիճակի և պետական դրամաշնորհի մասին տեղեկատվության վերստուգման նպատակով: Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնից ստացված տեղեկատվության մշակման հիման վրա, 2015-2016 ուսումնական տարվա աշնանային կիսամյակում մագիստրատուրայի կրթական աստիճանին կֆինանսավորվի (դեկտեմբերի երկրորդ կեսին կփոխանցվի) ծրագրի 174 նախկին մասնակից,

- Ծրագրի գործող 95 խորհրդատու-ուսուցչի անցկացվեց «Ունկնդրման ունակություն-սովորույթների զարգացում» երկարաժամկետ մեթոդական դասընթացի II մոդուլը,
- Հաշվետու տարվա հոկտեմբերին ծրագրի շրջանակներում լրացուցիչ հայտարարվեց վրացերենից, պատմությունից, աշխարհագրությունից ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ օգնական ուսուցիչների ընտրական մրցույթ,
- 2015 թվականի նոյեմբերին ծրագրի շրջանակներում հայտարարվեց խորհրդատու-ուսուցիչների ընտրական մրցույթ:

Միջմշակութային երկխոսության և վրաց լեզվի ուսման/ուսուցման աջակցության նպատակով, 2014-2015 թթ. Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից «Ամառային դպրոցներ» ծրագրի շրջանակներում իրականացվեց «Միջազգային ամառային դպրոց Վրաստանում» (2014) և «Բազմամշակութային ամառային դպրոց էթնիկ փոքրամասնությունների համար» ենթածրագիրը (2015): Վերը նշված ենթածրագրի շրջանակներում կազմակերպվեց «Բազմամշակութային ամառային դպրոց ուսուցիչների համար» և «Բազմամշակութային ամառային դպրոց աշակերտների համար»:

Մասնագիտական զարգացման շրջանակներում Զ.Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի կողմից իրականացված «Պետական լեզվի ուսուցման ծրագիր».

- Վերամշակվեց պետական լեզվի ուսուցման ծրագիրը – ուսուցումն իրականացվեց երեք. A1, A2 և B1 մակարդակի շրջանակներում, փոփոխված դասաժամային վերաբաշխմամբ (120; 120; 120), դպրոցի ութ տարածաշրջանային ուսումնական կենտրոններում,
- Յուրաքանչյուր մակարդակին համապատասխան պատրաստվեցին և տպագրվեցին ուսումնական ձեռնարկներ,
- Պետական լեզվի ուսուցման ծրագրի գործողության ոլորտի ընդլայնման նպատակով, համապատասխանաբար պետական լեզվի դասավանդման ծրագրին ընդգրկված ունկնդիրների թվաքանակի աճին, դպրոցն անցկացրեց Վրաստանի տարածաշրջաններում պետական լեզվի և քաղաքացիական կրթության տեսանկյունից առկա հիմնախնդիրների պլանային հետազոտություն, որի շրջանակներում Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջաններում անցկացվեցին բազում հանդիպումներ տեղական ինքնակառավարման և գործադիր իշխանության ներկայացուցիչների, ինչպես նաև անմիջականորեն բնակչության հետ: Ուրվագծվեց պետական լեզուն սովորելու և լրացուցիչ ուսումնական կենտրոններ բացելու անհրաժեշտությունը,
- Սկսվեց վրաց լեզվի ուսուցման դասընթացի իրականացումը, որն ընդգրկում է ընդհանրապես եթնիկ փոքրամասնություններով բնակեցված բնակչությանը: Ստեղծվեցին մոբիլ խմբեր, որոնք շրջանային կենտրոնից հեռու գտնվող գյուղերի բնակչության համար տեղում իրականացրին պետական լեզվի ուսուցման ծրագիր: Ծրագրի շրջանակներում ընդամենը 37 այդպիսի խումբ է,
- Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնի հետ համաձայնությամբ, դպրոցը ստեղծեց ոչվրացալեզու

մանկավարժների A1 մակարդակի ուժեղացված դասընթաց, լրացուցիչ նյութերով և ռեսուրսներով (120 ժամ),

- Կազմվեց 2015 թվականի ծրագրում ընդգրկված ունկնդիրների միասնական տվյալների բազա,
- Դասավանդման որակի զարգացման նպատակով մշակվեց մանկավարժների գնահատման համակարգ, որի շրջանակներում իրականացվեց պետական լեզվի դասավանդման ծրագրի մանկավարժների գնահատում,
- Տարվա ընթացքում տարածաշրջանային ուսումնական կենտրոններում հաստատուն կերպով իրականացվում էր ուսումնական գործընթացի մոնիտորինգ. ներկայություն բաց և պլանային դասերին,
- Մոնիտորինգի արդյունքների և մանկավարժների գնահատման համակարգով նախանշված կարիքների համաձայն 2-անգամ (II և IV եռամսյակում) անցկացվեց եռօրյա վարժանք մանկավարժներին ուսումնական գործընթացի մոնիտորինգի արդյունքներին ծանոթացնելու, բացահայտված թերությունները վերացնելու և ուսումնական ռեսուրսների ստեղծման վրա աշխատելու նպատակով,
- Անցկացվեց պետական լեզվի ուսուցման ծրագրի մանկավարժների ընտրության մրցույթ ծրագրի շրջանակներում նոր խմբերի ստեղծման համար, որի արդյունքում ընտրվեց 22 մանկավարժ,
- SDC խմբի հետ համագործակցության արդյունքում մշակվեց և պատրաստվեց պետական լեզվի ուսուցման կազմակերպման ընթացակարգ,

- Պետական լեզվի ուսուցման ծրագրի շրջանակներում վերապատրաստվեց հանրային սեկտորում աշխատանքի տեղավորված 1694 անձ,
- Դպրոցի Կանոնադրությունում իրականացվեց փոփոխություն, ինչը նախատեսում է պետական լեզվի ուսուցման ծրագրում ցանկացած հետաքրքրվող անձի (Վրաստանում օրինականորեն գտնվող) ընդգրկում:

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ գործունեություն էին ծավալում ՀԻԻԱ Ջ.Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի տարածաշրջանային ուսումնական կենտրոնները: Մասնավորապես, Բոլնիսի տարածաշրջանային ուսումնական կենտրոնում պետական լեզվի հենքային դասընթացով վերապատրաստվեց էթնիկ փոքրամասնության 52 ներկայացուցիչ (հանրային աստիճանավորներ և մանկավարժներ), իսկ Ծալկայի տարածաշրջանային ուսումնական կենտրոնում լեզվի ուսուցման դասընթաց անցավ 93 ունկնդիր: Դմանիսի տարածաշրջանային ուսումնական կենտրոնում ուսումնառության 3 ամսյա դասընթաց անցավ 84 ունկնդիր: 2015 թվականի վերջին դպրոցում վրաց լեզվի և համակարգչային ունակություն-հմտության ուսուցման դասընթացներին հաշվվում էր 38 ունկնդիր:

Վրաստանի Արդարադատության նախարարի նախաձեռնությամբ, 2015 թվականի ընթացքում Փոկայի, Կաբալի, Ղվարելձղալիի և Սարթիճալայի հասարակական կենտրոններում էթնիկ փոքրամասնությունների համար իրականացվեց վրաց լեզվի ուսուցման դասընթաց: Նախագիծն իրականացավ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) և Շվեդիայի

միջազգային զարգացման գործակալության (SIDA) ֆինանսավորմամբ, իսկ ուսուցման դասընթացը ղեկավարեցին Արդարադատության ուսումնական կենտրոնի մարզիչները: Վրաց լեզվի ուսուցման դասընթացի նպատակը ոչ միայն աջակցությունն էր պետական լեզվի ուսուցմանը, այլև վրաց գրականության, պատմության և մշակույթի հետ ծանոթացումը: Դասընթացն անցնելու վկայական ստացավ ընդհանուր առմամբ 90 աշակերտ:

Ոչվրացալեզու դատապարտյալներին պետական լեզվի, ուսումնական դասընթացի ապահովում. (Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության կողմից իրականացված գործունեություն)

Քրեակատարողական համակարգում ոչվրացալեզու դատապարտյալի գոյության դեպքում, սոցիալական բաժինը ապահովում է նրա ընդգրկվածությունը վրաց լեզվի ուսուցման ծրագրին: Վրաց լեզվի ուսուցման դասընթացներում 2015 թվականի ընթացքում ընդգրկված էր 52 դատապարտյալ:

Վրաստանի Սպորտի և երիտասարդության գործերի նախարարության կողմից իրականացված միջոցառումներ.

- Մշակվեց հատուկ ուսումնական մոդուլ «Վրաց լեզվի էլեկտրոնային/հեռահար ուսուցում էթնիկ հայ երիտասարդների համար», որը բեռնվեց www.teach.ge կայք-էջին և մատչելի է անվճար հայալեզու օգտատերերին: *Հատկանշական է, որ 2014 թվականին նախարարությունը ստեղծեց վրաց լեզվի էլեկտրոնային ուսուցման մոդուլ նաև էթնիկ ադրբեջանցի երիտասարդության համար:*

Կրթության և պետական լեզվի ուսուցման ուղղությամբ պետական լիազոր – նահանգապետի վարչությունների կողմից իրականացված գործունեություն

Քվեմո Քարթլիի տարածաշրջան

- Պետական լեզվի իմացության խորացման և որակավորման բարձրացման նպատակով, Գարդաբանի մունիցիպալիտետի ոչվրացալեզու մանկավարժների համար ողջ տարվա ընթացքում ակտիվորեն անց էին կացվում վարժանքներ և տեղեկատվական հանդիպումներ:
- ՈՈԻԱ - Ոչձեռներեցային, ոչկոմերցիոն իրավաբանական անձ Դմանիսի լուսավորչական կենտրոնում տարվա ընթացքում ընթանում էին վրացերեն և անգլերեն լեզուների ուսուցման դասընթացներ: Վրաց լեզվի դասավանդման դասընթաց ընդունվեց և ամբողջ դասընթացային շրջանն ունկնդրեց էթնիկ փոքրամասնության 79 ներկայացուցիչ (Վկայական ստացավ 49 աշակերտ), անգլերեն լեզվի դասընթաց ընդունվեց էթնիկ փոքրամասնության 79 ներկայացուցիչ (վկայական ստացավ 68 աշակերտ),
- Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվում էր ք. Դմանիսի թիվ 1 մանկապարտեզում 18 երեխայի համար նախատեսված «էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ նախադպրոցական տարիքի երեխաների վրաց լեզվի ուսուցման աջակցություն» նախագիծը:
- Դմանիսի մունիցիպալիտետի Քվեմո Որոզման, Կարաբուլախ, Ամամլո և Իֆնար գյուղերում Թբիլիսիի Իվ. Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի «Սովորենք վրացերեն» պիլոտային նախագծի շրջանակներում բացվեցին վրաց լեզվի ուսուցման 15-20

հոգանոց խմբեր: Նշված խմբերում ուսուցման եռամսյա դասընթաց անցան Քվեմո Օրոզանում՝ 61, Իֆնարում՝ 45, Ամամլոյում՝ 77 և Կարաբուլախում՝ 75 ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ,

- Տարվա ընթացքում մունիցիպալիտետների դպրոցներում անցկացվեցին նաև տարբեր տեսակի մշակութային-լուսավորչական նախագծեր և միջոցառումներ, այդ թվում գրական երեկոներ, մրցույթներ, վիկտորինաներ, օլիմպիադաներ, ինչը նպատակամղված էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների ինտեգրմանը, ակտիվ, ըմբռնող և հանդուրժողական քաղաքացի ձևավորման աջակցությանը:

Կախերի տարածաշրջան

- Ախմետայի մունիցիպալիտետի, Պանկիսի կիրճի մանկապարտեզներում, տարվա ընթացքում փոխվեց գույքը և սարքավորվեց ենթակառույցը:
- Բիրկիանիի և Օմալոյի դպրոցներում նորացվեցին մարզադաշտերը, ինչպես նաև իրականացվեց «Դպրոցական նախաձեռնությունների խրախուսման ենթածրագիր» նախագիծը, որը ներառում էր լուսավորչական, սպորտային, արվեստից և ճանաչողական ոլորտները: Ջողոլոյի գյուղական գրադարանը սարքավորվեց համակարգչային տեխնիկայով և մոբիլ համացանցով, Քվեմո Խալաձանի գյուղում բացվեց գյուղական գրադարան, որին փոխանցվեցին գրքեր, համակարգչային տեխնիկա՝ մոբիլ համացանցով:
- Տեղեկատվական հանդիպումներ կայացան Սազարեջոյի մունիցիպալիտետի վարչությունում «Կախերի երկրամասի

ուսուցիչներ – մշակութային ժառանգության դեսպաններ» նախագծի շրջանակներում, ինչպես նաև էթնիկ փոքրամասնությունների խնդրանքով, վրաց լեզուն ավելի լավ սովորելու նպատակով Իորմուղանյո գյուղի դպրոցին փոխանցվեցին 200-ից ավելի վրացերեն և վրաց լեզվով թարգմանված գրքեր:

- Լագոդեխի մունիցիպալիտետի Կաբալա գյուղում բացվեց երիտասարդական համայնքային կենտրոն, որը վերանորոգվել էր Վրաստանի զարգացման ասոցիացիայի (ՎԶԱ) կողմից, իսկ գույքով ապահովումը հոգացել էր Լագոդեխի մունիցիպալիտետի վարչությունը: Կաբալայի համայնքային կենտրոնը, մունիցիպալիտետի և սպորտի զարգացման կենտրոնի աջակցությամբ, տարվա ընթացքում իրականացրեց տեղական երիտասարդների կողմից նախաձեռնած մտավոր-մշակութային-ստեղծագործական և մարզական միջոցառումներ:

IV. Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողականության միջավայրի ապահովում

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ շարունակվեց ծրագրերի/նախագծերի և միջոցառումների իրականացումը, ինչը նպատակամղված է էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանմանը/զարգացմանը և ժողովրդականացմանը: Մշակութային ինքնադրսևորման և վրացական տարածությունում դրանց հետագա ինտեգրման նպատակով, շարունակվում է աջակցությունը Հանրային Իրավունքի Իրավաբանական Անձերին, մասնավորապես. ՀԻԻԱ Դավիթ Բաագովի անվան վրաց-

հրեական և վրաց-հրեական փոխհարաբերությունների պատմության թանգարանի, ՀԻԻԱ Միրզա-Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարանի, ՀԻԻԱ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական, ՀԻԻԱ Թբիլիսիի Հեյդար Ալիևի անվան ադրբեջանական և ՀԻԻԱ Ալ. Գրիբոյեդովի անվան ռուսական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոնների գործունեությանը:

Թատրոններին աջակցություն

Ալ. Գրիբոյեդովի անվան ռուսական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոնը, հիմնադրման 170-ամյակի կապակցությամբ, անցկացրեց ամբողջ շարք միջոցառումներ. ողջ տարվա ընթացքում թատրոնում կայացավ 121 ներկայացում, այդ թվում 3 պրեմիերա: Բեմադրություններին ներկա էր 39 853 հանդիսատես: Թատրոնը արտասահման կատարած հյուրախաղերին ներկայացրեց 12 բեմադրություն: Ինչ վերաբերում է ՀԻԻԱ Թբիլիսիի Հեյդար Ալիևի անվան ադրբեջանական և ՀԻԻԱ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոններին, ադրբեջանական թատրոնը 8 ներկայացում և 2 հյուրախաղ, իսկ հայկական թատրոնը 9 տեղական և 1 արտագնա բեմադրություն անցկացրեց: Ադրբեջանական թատրոնում հանդիսատեսի թիվը կազմում էր 2 210, իսկ հայկական թատրոնում 1 144 հանդիսատես: Իսկ թանգարանները վարում են գիտական-հետազոտական գործունեություն :

Թանգարաններին աջակցություն

ՀԻԻԱ Դավիթ Բաազուլի անվան Վրաստանի հրեաների և վրաց-հրեական փոխհարաբերությունների պատմության թանգարան: 2015 թվականին թանգարանը անցկացրեց 2 գրքի շնորհանդես, 1 հիշատակի երեկո, 2 ֆիլմի ցուցադրություն, 1 ստեղծագործական երեկո, 1 երեկո, 1 դասախոսություն: Մայիսի 18-ին, թանգարանների միջազգային օրվա կապակցությամբ անցկացվեց 3 միջոցառում: Հունիսի 28-ին աղետից տուժած երեխաներին փոխանցվեց դպրոցական գույք և այլ նվերներ: Ընթանում է աշխատանք թանգարանի և թանգարանային հիմնադրամի գույքագրման և հիմնադրամների հայթայթման-հարստացման ուղղությամբ: Թանգարանը հյուրընկալեց Վրաստանում Իսրայելի նախկին դեսպանին և Երուսաղեմի ազգային համալսարանի պրոֆեսոր-ուսուցիչների: Սեպտեմբերի 4-ին տեղի ունեցավ Օնի քաղաքի Սինագոգի 100-ամյակին նվիրված միջոցառում, «26 դար» թերթում և ԱՄՆ-ում լույս տեսնող «Դավթի վահան» թերթում տպագրվեցին հրապարակումներ: Սեպտեմբերի 7-ին թանգարանում տեղի ունեցավ հրեական մշակույթի օրվան նվիրված «Կամուրջներ» երեկոն:

ՀԻԻԱ Միրզա Ֆաթայի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարան: Թանգարանում կայացավ 6 հանդիպում, 1 սեմինար, կազմակերպվեց 8 միջոցառում, այդ թվում քաղաքներ Գյանջայի և Քուրախի գրողների կոնֆերանս, 1990 թվականին Բաքվում անկախության համար զոհվածների հիշատակի երեկո, գրող Է.Մահմուդովի 75-ամյա հոբելյանին նվիրված երեկո, ֆոտո-ցուցահանդես «Խոջալոյի ճշմարտությունը»: Կազմակերպվեց «Զելիմխանի խոսքի զագաթը» գրքի և 2 նոր հրատարակությունների շնորհանդես: Անցկացվեց

5 ցուցահանդես, այդ թվում, մայիսի 21-ին Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության կազմակերպմամբ մշակութային բազմազանության օրվա կապակցությամբ: Անցկացվեցին հանդիպումներ Ադրբեջանի և Վրաստանի երիտասարդական կազմակերպությունների միջև: Ադրբեջանի ճարտարապետության և շինարարական համալսարանի ներկայացուցիչների հետ՝ արտասահմանցի ուսանողների ընդունման պայմաններին ծանոթանալու նպատակով: Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանում կազմակերպվեց ադրբեջանական մշակութային ժառանգության ցուցահանդես, անցկացվեց 3 հրատարակության շնորհանդես: Հուլիսի 9-ին անցկացվեց Միրզա Ֆաթալի Ախունդովի ծննդյան 203-րդ տարեդարձին նվիրված ցուցահանդես, որի կազմակերպիչը նրա անվան թանգարանի հետ միասին եղել է Վրաստանի թատրոնի, երաժշտության, կինոյի և պարարվեստի պետական թանգարանը: Հուլիսի 27-ին թանգարան այցելեց Ադրբեջանի Միլի Մեջլիսի պատվիրակությունը, իսկ սեպտեմբերի 22, 23 և 24-ին անցկացվեցին Ուզեիր Հաջիբեկովի ծննդյան 130-ամյա հոբելյանին նվիրված դասական երաժշտության համերգներ Մառնետուլիում, Գարդաբանում և Բոլնիսում: Անցկացվեց Ռաշիդ Բեյբութովի 100-ամյա հոբելյանին նվիրված համերգ, որին մասնակցեց քաղաք Խիրդալանի երաժշտական դպրոցի աշակերտական նվագախումբը: Նոյեմբերի 13-ին Միրզա-Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարանի տնօրեն Լեյլա Ալիևան, հանդուրժողականության օրվա կապակցությամբ, պարզևատրվեց «Հանդուրժողականության աջակից» մրցանակով:

Մշակութային ժառանգության պահպանություն

- Պատրաստվեց Նորաշենի (ք.Թբիլիսի) տաճարի վերականգնման սղագրված նախագիծը,
- Վերականգնողական աշխատանքներ անցկացվեցին Կվիրիկե գյուղում (Քոբուլեթի մունիցիպալիտետ)՝ Ջամեի կտուրին,
- Ավարտվեց Վրաստանի տարածքին գոյություն ունեցող գերմանական ժառանգության (պատմական բնակավայրեր, պաշտամունքային և աշխարհիկ, այդ թվում հասարակական ինդուստրիալ ճարտարապետություն) գույքագրում-փաստաթղթավորումը: Նմանապես կատարվեց մշակութային ժառանգության այն հուշարձանների նույնականացումը, որոնց պահանջվում է անհետաձգելի պահաձոյացման միջամտություն:
- Իրականացվեց Վրաստանի տարածքին գոյություն ունեցող օսմանյան հուշարձանների մոնիթորինգ:

Ընդհանուր տեսություն

Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի ինքնագոյի պահպանման նպատակով, «Էթնիկ փոքրամասնություններին աջակցություն» առաջնահերթության շրջանակներում շարունակվեց մշակույթի ոլորտում գործող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ստեղծագործությունն արտացոլող ցուցահանդեսների, բեմադրությունների, հրատարակությունների, համերգների աջակցությունը:

- Արդեն 5-րդ տարին անընդմեջ շարունակվում է ՀԻԻԱ Միրզա-Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարանի «Ադրբեջանական գորգեր-ավանդույթների պահպանում» նախագիծը: Նշված նախագիծը ծառայում է ադրբեջանցու ձեռքով գործած գորգերի հնագույն տեխնոլոգիաների տասարդների շրջանում տարածելու և ժողովրդականացնելու նպատակին: Ամբողջ տարվա ընթացքում Թբիլիսիում և տարածաշրջաններում երիտասարդներին տրվեց տեքստիլի հնագույն տեխնոլոգիան և ավանդույթները սովորելու հնարավորություն, իսկ տարվա վերջին կազմակերպվեց նորաստեղծ գորգերի ցուցահանդես: Նախագծի շրջանակներում աշխատանքի է տեղավորվել 5 մարդ: Գորգեր գործել սովորեցին 19 երիտասարդներ:
- ՀԻԻԱ կինոյի և թատրոնի երաժշտության և պարարվեստի թանգարանի կողմից առաջին անգամ լույս տեսավ «Գերմանացի նկարիչները Վրաստանում» ալբոմ, որը կապվում է Վրաստանում գործող գերմանացի նկարիչների ստեղծագործության հետ: Ալբոմում տեղ են գտել Պաուլ և Էլեն Ֆրանկենների, Կարլոս Ռիհարդ Զոմերի, Ֆրիդրիխ Ֆրիշի և այլ գերմանացի նկարիչների Վրաստանի թանգարաններում և մասնավոր հավաքածուներում պահպանված աշխատանքները, դրոշմված Վրաստանում գործող եվրոպացի նկարիչների միանգամայն տարբերվող անհատականությամբ և ձևազրով:
- Վրաստանում գործող մեծ ստեղծագործող Սերգո Փարաջանովի կյանքին և գործունեությանն էր նվիրված «Սերգո Փարաջանով-XXI դարի երագ» ցուցահանդեսը: Ցուցահանդեսին ներկայացված էին նրա ստեղծագործությունն արտացոլող հազվագյուտ նմուշներ:

- Հրատարակվեց օս գրող Կոստա Խեթագուրովի բանաստեղծությունների երկլեզու՝ օսերեն-վրացերեն ժողովածուն, որտեղ լիարժեք ներկայացված էր օս պոետի ստեղծագործությունը:
- ՈՈԻԱ «Կանանց աջակցության» կողմից կազմակերպվեց օսական դասական երաժշտության երեկո, որտեղ հնչեցին օս դասական երգահանների ստեղծագործությունները: Երեկոն նվիրվեց օսական երաժշտության ժողովրդականացմանը, վրացիների և օսերի բարեկամությանը: Կատարվեցին Թբիլիսիի կոնսերվատորիայի շրջանավարտ երգահանների (Ջ.Խաբալովա, Ֆ.Ալբորով, Մ.Պլիեն) ստեղծագործությունները, ինչպես նաև Ա. Կերեսելիձեի, Վ.Դոլիձեի, Վ.Ազարաշվիլու կողմից օսական մոտիվներով գրված ստեղծագործությունները: Համերգին մասնակցում էին Թբիլիսիի «Ջորջիան սիմֆոնիետա» կամերային նվագախումբը, Աբխազիայի կապելլան, Ցիսնվալից և Աբխազիայից տարհանված երաժիշտ-կատարողներ: Նախագծին մասնակցում էր շուրջ 80 մարդ:
- Նախարարության նախաձեռնությամբ, էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում (Նինոծմինդա, Բոլնիսի) կայացավ «Բազմազան Վրաստան» նախագծի շնորհանդեսը: Նախագծի շրջանակներում տարածաշրջանի սովորող-երիտասարդությունը հանդիպեց ժամանակակից վրաց գրողների հետ, կազմակերպվեց նախարարության կողմից իրականացված «Միասնական Վրաստան» երկլեզու ինտելեկտուալ մեզա-խաղերի շնորհանդեսը և ցուցադրվեցին վերջին ժամանակաշրջանում վրացական կինոարտադրության առաջիկա արտադրանքը՝ Լ.Թուրբերիձեի «Մոիրա»-ն և կարճամետրաժ վրացական գեղարվեստական ֆիլմեր:

- Արդեն վեցերորդ անգամ, նախարարության աջակցությամբ, Բոլնիսի մշակույթի կենտրոնում անցկացվեց «Մեկ երկնքի տակ» բազմազգ մշակութային փառատոնը, որին մասնակցում էին էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների աշակերտները: Փառատոնը ծառայում է էթնիկ փոքրամասնությունների ազգագրական ավանդույթների պահպանմանը, միջմշակութային երկխոսության զարգացմանը, երիտասարդության ինչպես դասական երաժշտության, այնպես էլ բանահյուսության նկատմամբ հետաքրքրության հրահրմանը (նախագծին մասնակցում էր 180 աշակերտ):

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի կողմից իրականացված գործունեություն

Հաշվետու ժամանակաշրջանում, Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանը ակտիվորեն համագործակցում էր Հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի քաղաքացիական ինտեգրման վարչության, Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակի հանդուրժողականության կենտրոնի, Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների համայնքների հետ: Գործընկեր կազմակերպությունների հետ սերտ համագործակցության արդյունքում, 2015 թվականին Ազգային գրադարանում անցկացվեց 10 միջոցառում: Այդ թվում գեղանկարչական և ֆոտո-ցուցահանդեսներ, համերգներ, գրքերի շնորհանդեսներ: Միջոցառումների ժամանակ բազմիցս ցուցադրվեցին էթնիկ փոքրամասնությունների մասին ազգային գրադարանի

հիմնադրամներում պահպանվող հազվագյուտ նյութեր, ազգային գրադարանի բառարանների բազայում տեղադրվեցին ուկրաիներեն-վրացերեն, աբխազերեն-վրացերեն, ռուս-վրացերեն, հայ-վրացերեն և վրաց-օսերեն բառարանները:

Վերը թվարկած միջոցառումների նպատակն էր Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության, արվեստի և ավանդույթների ժողովրդականացումը, նրանց վրաց-մշակութային տարածությունում ինտեգրումը, մասնավորապես հաշվետու ժամանակաշրջանում իրականացվեցին հետևյալ նախագծերը և միջոցառումները.

- Սերգո Փարաջանովի հոբելյանին նվիրված երեկո,
- Ախալցխիեի մունիցիպալիտետի Փոքր Պամաճ գյուղի հայկական դպրոցին փոխանցվեց 500 գիրք,
- Խորհրդարանի Ազգային գրադարանի ցուցասրահում «Առաջ դեպի հանդուրժողականություն» նախագծի շրջանակներում «Վրաստանի Հայ համայնք» և «Վրաստանի եզդիների տուն» կազմակերպությունները անցկացրեցին միջոցառում,
- Անցկացվեց չեչենների և ինգուշների բռնարտաքսման 71-րդ տարելիցին նվիրված միջոցառում,
- Չերքեզական մշակույթի կենտրոնի կազմակերպմամբ և ազգային գրադարանի աջակցությամբ նշվեց չերքեզական լեզվի և մշակույթի օրը, ինչպես նաև չերքեզական մշակույթի կենտրոնը Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի հետ ձևակերպեց փոխհամագործակցության հուշագիր,
- «Ադրբեջանական ձեռքի աշխատանք գորգեր՝ ավանդույթի պահպանում» նախագծի շրջանակներում Խորհրդարանի ազգային գրադարանի ցուցասրահում կազմակերպվեց ադրբեջանական մշակութային ժառանգության նմուշների ցուցահանդես: Ազգային գրադարանի և Միրզա Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական

մշակույթի թանգարանի միջև ձևակերպվեց համագործակցության հուշագիր:

- Խորհրդարանի ազգային գրադարանում բացվեց Ռասիմ Հասանովի նկարների «Ազատություն» ցուցահանդեսը:

Ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի կողմից իրականացված գործունեություն

Հաշվետու ժամանակաշրջանում Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլյում ստեղծվեց էթնիկ փոքրամասնությունների համակարգող խորհուրդ, որի նպատակն է էթնիկ փոքրամասնությունների հետ հարաբերությունների խորացումը և համագործակցության աջակցումը:

2015 թվականին քաղաք Թբիլիսիի Սակրեբուլյի անունների և խորհրդանշանների հանձնաժողովի կողմից քաղաքի մի քանի փողոցի շնորհիվեց էթնիկ փոքրամասնությունների արժանավոր ներկայացուցիչների անուններ:

Ք.Բաթումի մունիցիպալիտետի կողմից իրականացված գործունեություն

Ք.Բաթումի մունիցիպալիտետի կողմից հիմնադրված ՈՈԻԱ «Բաթումի մշակույթի կենտրոնին կից գործող «Բարեկամության տանը» միավորված է 9 սփյուռք (հայկական, թուրքական, ադրբեջանական, ռուսական, ուկրաինական, հրեական, հունական, գերմանական և եզդիական): Յուրաքանչյուր համայնք մունիցիպալային բյուջեից ֆինանսավորվում է 5 000 լարիով, որը հատկացված է տարբեր տեսակի միջոցառումներ կազմակերպելուն: Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվեցին տարբեր մշակութային միջոցառումներ: Բացի դրանից «Բարեկամության

տան» շրջանակներում ընթանում են պետական լեզվի դասավանդման դասընթացներ:

Վրաստանի Սպորտի և Երիտասարդության գործերի նախարարության իրականացրած գործունեություն

Հաշվետու ժամանակաշրջանում նախարարությունը իրականացրեց մի շարք ծրագրեր և նախագծեր.

- Շարունակվեց աուդիո ներկայացումների ձայնագրությունը («Դաստիարակը», «Վագրենավորը») վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Նախագծի շրջանակներով կազմակերպվեցին շնորհանդեսներ, պատրաստվեցին DVD-սկավառակներ, որոնք տարածվեցին Վրաստանի տարածաշրջաններում,
- Լագոդեխի մունիցիպալիտետի էթնիկ փոքրամասնության երիտասարդների համար իրականացվեց 2-ամսյա վարժանքային ուսուցում «Ակտիվ երիտասարդություն և ազատ տարածություն», որի նպատակը ոչձևական կրթության ճանապարհով գիտելիքի և փորձի ձեռքբերումն է,
- Իրականացվեց վարժանք «Քաղաքացիական ակտիվություն բազմազգ Վրաստան», որին ընդգրկված էին Կախեթի տարածաշրջանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների երիտասարդները,
- Նշված ժամանակամիջոցում ընթանում էին մշակութաստեղծագործական և ճանաչողական վարժանք/սեմինարներ «Ավելի լավ ճանաչենք միմյանց», ինչը նպատակամղված էր ինտեգրման աջակցությանը: Դրան մասնակցում էին Թբիլիսիի և Սամցխե-

Չավախերի տարածաշրջանի վրացի և էթնիկ փոքրամասնության դեռահասները:

- Հնէաբանական արշավների շրջանակներում ազգային թանգարանի Նաստակիսի հիմնադրամային պահեստի հենքով իրականացվեց հնէաբանական պեղումների ուղղորդում: Արշավին մասնակցում էին էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններից 50 ներկայացուցիչ ադրբեջանական, հայկական, ռուսական, օսական, քիստական էթնիկ խմբերից, Կախերի տարածաշրջանից:
- «Իմ հայրենիքը Վրաստանն է» գրական մրցույթին մասնակցեցին Վրաստանում բնակվող տարբեր էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչներ, պոեզիայի շնորհ ունեցող երիտասարդներ: Նրանց կողմից ներկայացված լավագույն բանաստեղծությունները կհրատարակվի գրական ժողովածուի տեսքով:

2015 թվականի ընթացքում քերա-կատարողական հիմնարկություններում ընթանում էին տարբեր մշակութա-ճանաչողական և սպորտային միջոցառումներ, որին ակտիվորեն մասնակցում էին էթնիկ փոքրամասնություններին պատկանող դատապարտյալները:

Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում պետական լիազոր-նահանգապետի վարչության կողմից իրականացվեցին տարբեր տեսակի մշակութային նախագծեր և միջոցառումներ, այդ թվում.

- Ժողովրդա/կրոնական տոների նշում, անցկացվեցին համերգներ, գրական մրցույթներ, ցուցահանդեսներ, երաժշտական և թատերական փառատոներ,
- Կազմակերպվեցին ամառային ճամբարներ,
- Մառնեուլիում սկսվեց գրադարանի շինարարություն,
- Մունիցիպալիտետների մշակույթի տներում և գյուղական ակումբներում անցկացվեցին տարբեր միջոցառումներ:

Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակեցված վարչական միավորումներում գործում են ակումբային հիմնարկություններ և գեղարվեստական կոլեկտիվներ, ինչպես նաև երաժշտական և նկարչական դպրոցներ:

V. Հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի իրականացրած գործունեություն

Հաշվետու ժամանակաշրջանում, պետական նախարարի աշխատակազմը առաջնորդվում էր միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքով, մասնավորապես պետական նախարարի աշխատակազմը անցկացրեց հանձնաժողովի ընդլայնված նիստեր, արտագնա հանդիպումներ, ինչպես նաև թեմատիկ աշխատանքային խմբերի հանդիպումներ կրթության և պետական լեզվի, լրատվամիջոցների և տեղեկատվության մատչելիության ուղղությամբ, մշակվեցին առաջարկություններ և հանձնարարականներ: Թեմատիկ աշխատանքային խմբերի ձևաչափով գործունեությամբ ստեղծվում է տարբեր հարցերի քննարկմանը ոչկառավարական կազմակերպությունների, փորձագետների կամ նշված ոլորտում աշխատող այլ շահագրգիռ ակտորների ավելի շատ ընդգրկվածության հնարավորություն: Պետական նախարարի աշխատակազմը միջգերատեսչական հանձնաժողովի հետ միասին պատրաստեց և ներկայացրեց 2014 թվականի Գործնական պլանը կատարելու գեկույց:

Նշված ժամանակաշրջանի ընթացքում ընթանում էր նոր քաղաքացիական ինտեգրման և Գործնական պլանի մշակում: Նոր ռազմավարական փաստաթղթի մշակմանը պետական նախարարի

աշխատակազմի հետ միասին ընդգրկված էր անկախ փորձագետների խումբը: Մինչև փաստաթղթի հաստատումը պետական նախարարի աշխատակազմը այն քննարկման համար ներկայացրեց ազգային փոքրամասնությունների խորհրդին, ոչկառավարական սեկտորին, փորձագետներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, քաղաքական կուսակցություններին, ինչպես նաև անմիջականորեն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին ինչպես Թբիլիսիում, այնպես էլ տարածաշրջաններում (Մառնեուլի, Դմանիսի, Ախալցխե, Ախալքալաք, Նինոծմինդա, Բաթումի):

Նշված ժամանակաշրջանում պետական նախարարի աշխատակազմի ներկայացուցիչները հանդիպեցին ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի և Վրաստանի ու Եվրամիության միջև արտոնագրային ռեժիմի ազատականացման Գործնական պլանի իմպլեմենտացիան գնահատող առաքելությունների փորձագետներին և ներկայացրեցին կատարման զեկույցներ, ինչպես նաև տեղի ունեցավ միջազգային պարտականությունների կատարման վերահսկողություն և հաշվետվություն (ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեին, Եվրոպայի խորհրդին, Եվրամիության գործիքներ):

Տեղեկատվական/իրազեկվածության բարձրացման քարոզչություն
Վրաստանի եվրոինտեգրման գործընթացի մասին: 2015 թվականի ընթացքում պատրաստվեցին և տարածվեցին տեղեկատվական նյութեր էթնիկ փոքրամասնությունների լեզուներով (աբխազերեն, օսերեն, հայերեն, ադրբեջաներեն): Անցկացվեցին տեղեկատվական հանդիպումներ, սեմինարներ և բանավեճեր Քվեմո Քարթլիի, Սամցխե-Չավախեթի տարածաշրջաններում և Թբիլիսիում, տարբեր թիրախային խմբերի, ուսանողների և բարձրասարանցիների, ոչկառավարական կազմակերպությունների, տարածաշրջանային լրատվամիջոցների և

տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև ֆերմերների հետ:

Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց տարբեր տեսակի մշակութային միջոցառումներին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների ընդգրկվածությանը.

- Պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, Գնահատումների և քննությունների ազգային կենտրոնի և Ներքին գործերի նախարարության ակադեմիայի ներկայացուցիչները Մաոնեուլիում հանդիպեցին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ դիմորդներին և բարձրասարանցիներին և մատուցեցին տեղեկատվություն կրթության ծրագրերի նորույթների և "1+4" ծրագրի մասին,
- Կայացավ պետական լեզվի օրվան նվիրված միջոցառում, որտեղ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչը երեխաներին ընթերցեց վրաց գրողների ստեղծագործությունները,
- Նշված ժամանակաշրջանում ստեղծվեց «Երիտասարդ առաջնորդների ակումբ» նախագիծը: Նախագծի շրջանակներում պետական նախարարի աշխատակազմը Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ միասին անցկացրեց դասախոսություն/բանավեճ, ինչը նպատակաուղղված էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների պետականորեն մտածողության և գիտակցության բարձրացման աջակցությանը,
- Քվեմո Քարթվիում անցկացվեցին հանդիպումներ աղջիկների իրավունքների մասին,
- Մաոնեուլի շրջանի գյուղերի հանրային դպրոցներից 50 աղբբեջանալեզու երեխա ներկա գտնվեց տիկնիկային օպերային թատրոնի ներկայացմանը,

- Պետական նախարարի աշխատակազմը Մշակույթի և Հուշարձանների պահպանության նախարարության հետ համագործակցությամբ, «Մեկ երկնքի տակ» բազմազգ արվեստի փառատոնի շրջանակներում կազմակերպեց 2 համերգ: Փառատոնին մասնակցում էին Վրաստանի բոլոր տարածաշրջանների քաղաքներում գործող արվեստի դպրոցները և մշակույթի կենտրոններին կից գործող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների կատարողական կոլեկտիվները:
- Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված շաբաթի շրջանակներում պետական նախարարի աշխատակազմը Կախեթիում և Քվեմո Քարթլիում տեղական ուսանողների հետ անցկացրեց դասախոսություն/սեմինարներ և հայտարարեց ֆոտոմրցույթ երիտասարդների համար «Իմ բազմազգ հայրենիքը», բացահայտված հաղթողները պարգևատրվեցին,
- Կազմակերպվեց կանանց միջազգային օրվան նվիրված ընդունելություն, որին մասնակցեցին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանայք Կախեթի, Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններից, ինչպես նաև Թբիլիսիից:

Պետական նախարարի աշխատակազմը սերտ համագործակցում էր Ժողովրդական պաշտպանի գրասենյակին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի, քաղաքացիական սեկտորի, միջազգային կազմակերպությունների, երկրում լիազորագրված դիվանագիտական կորպուսի, տեղական և միջազգային փորձագետների հետ:

Գործնական պլանի իմպլեմենտացիայի գործընթացում, պետական նախարարի աշխատակազմը մշտական հաղորդակցություն ուներ տարածաշրջանների տեղական բնակչության, ինքնակառավարությունների և ոչկառավարական կազմակերպությունների հետ, կանոնավոր կերպով

ստանում էր լրատվություն քաղաքացիներից, արձագանքում էր գրասենյակում ստացված առաջարկություններին և դիմումներին:

Պետական նախարարի ներկայացուցիչները էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում (Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլի) համակարգում էին տարածաշրջաններում գրասենյակի աշխատանքը:

Տարվա ընթացքում, Հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը Վրաստանում բնակվող էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին, ինչպես բնակչությանը, այնպես էլ դիվանագիտական կորպուսին, շնորհավորում էր նրանց ազգային և կրոնական տոները: